

«Մաշտոցյան Մատենադարան» մատենաշար

«Մատենադարանի բարեկամներ»  
բարեգործական հիմնադրամ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՔ  
ԵՎ  
ՋԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

«Մագաղաթ»  
Հրատարակչություն

Երևան 2008 թ.

ՀՏԴ 941 (479.25): 37

ԳՄԴ 63.3 (2 Z)+74

Դ 418

Գիրքը տպագրվում է  
ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի  
նախարարության և «Մատենադարանի բարեկամներ»  
բարեգործական հիմնադրամի աջակցությամբ

### Խմբագիր՝ Վանուհի Եղիշյան

Դ 418 Դերիկյան Վարդան  
Վարդանանք և հայ երիտասարդությունը. - Երևան:  
Մազադաթ, 2008. - 96 էջ:

Գրքում ներկայացվում է Ավարայրի հոգևոր արժևորումը դարերի հոլովություն, ինչպես նաև՝ Վարդանանք հիշատակի ոգեկոչումը նոր շրջանի հայ հասարակական ու հոգևոր մշակութային կյանքում:

ISBN 978-99930-67-23-8

ԳՄԴ 63.3 (2Z)+74

©Վարդան Դերիկյան 2008 թ.

**Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք  
Ե Վ  
Տ Ո Ի Ն Ն Մ Ա Մ Ի Կ Ո Ն Ե Ի Ց**

*Դժվար է գտնել որևէ պատմության մեջ մի իշխանական տուն, որ դարերի ընթացքում մնար այնպես հավատարիմ իր տոհմական մտայնությանը և ավանդներին: Ութերորդ դարի Մուշեղը հար և նման էր չորրորդ դարի Մուշեղին: Արյան հետ ժառանգում էին ընտանիքի հերոսական ոգին: Անուններն անգամ, որ անցնում էին սերնդեսերունդ, հուշարարներն էին իրենց անցյալի: Մամիկոնյան տունը հայ գինվորական կորովի մարմնացումն է, հայ ասպետական կարողության կենդանի պատկերը:*

**Ն Ի Կ Ո Ղ Ա Յ Ո Ս Ա Դ Ո Ն Ց**

*Ավարայրը ո՛չ Տղմուտ գետի ափին սկսվեց և ո՛չ էլ Արտազի դաշտում ավարտվեց: Ավարայրը սկսվել էր Հայկի՝ Բելի դեմ մենամարտով և Վարդանանցից հետո շարունակվեց Վահանանց պայքարով, Վարդանակերտի ճակատամարտով, Անիի պաշտպանութամբ, Դավիթ Բեկի ապստամբութամբ, Սարգարապատի ու Լեռնահայաստանի հերոսամարտերով և Արցախով:*

*Վարդանանք ևս ունեին իրենց նախորդները և դարձան շարունակողները հայ ռազմական և հատկապես Մամիկոնյան ավանդների, որոնց հինգերորդ դարի սկզբում հոգևոր-իմացական մի նոր լույս ու փայլ էր հաղորդելու Թարգման-*

չաց շարժումը Տարոնից մինչև Վաղարշապատ:

Տարոնում էին Հին Հայաստանի պաշտամունքային նշանավոր կենտրոնները:

Տարոնում կատարվեց Հայոց ընդհանրական մկրտությունը, և Վաղարշապատի կաթողիկեի՝ Հայոց եկեղեցիների մայր եկեղեցու կողքին Տարոնում էր, որ հիմնվեցին Հայոց աշխարհի քրիստոնեական առաջին սրբավայրերը:

Տարոնից էր Մեսրոպ Մաշտոցը:

Տարոնում էր և Տունն Մամիկոնեից:

Աստղիկ դիցուհուն Վիշապաքաղն Վահագնից իր ջրերում մշուշով ծածկող (որտեղից է, ըստ ժողովրդական ստուգաբանության, «Մուշ» անվանումը) Արածանիի միգապատ ակերի նման մշուշապատ է և նախարարական այս տոհմի ծագումը:

Միջնադարում Արևելքից մինչև Եվրոպա, ընդհանրացված սովորությամբ, նախարարական տներին վերագրվում էր առասպելական և կամ հեռավոր երկրներից եկած իշխանազուհեներից լինելու ծագումը:

Հայոց աշխարհում անջնջելի հիշատակներ թողած Մամիկոնյան տան ծագումը համանման ձևով կապվում է Ճենաց աշխարհի հետ: Այս մասին գրում են Պատմահայր Մովսես Խորենացին ու Փավստոս Բուզանդը, ապա և Սեբեոսն (7-րդ դար) ու Հովհան Մամիկոնյանը (8-րդ դար):

Բուզանդը գրում է, որ Պապ Թագավորը, ամաչելով Մուշեղ Մամիկոնյանի հանդեպ իր տածած կասկածներից, գրկելով Հայոց Սպարապետին, ասում է, որ նա «ծագումով մեզ չափ պատվական է, և սրա նախնիները մեր նախնիների նման էին. սրա նախնիները թողել են Ճենաց աշխարհի թագավորությունն ու եկել են մեզ մոտ, ապրել ու մեռել են մեր նախնիների համար»<sup>1</sup>:

Առավել որոշակի են գրում Խորենացին, Սեբեոսը և Հով-

---

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, աշխտ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 305, 307:

Հան Մամիկոնյանը՝ ներկայացնելով Մամիկոնյան անվան երեք տարբեր ստուգաբանություն: Ըստ Պատմագոր՝ Մամիկոնյանները Հայաստանում հաստատվել են Տրդատ Մեծի ժամանակ: Խորենացին գրում է, որ Ճենաց թագավորն ունեցել է երկու դայակորգի, որոնք եղել են մեծ նախարարներ: Նրանցից Բզդոխը իր Մամգուն եղբոր մասին չարախոսում է Ճենաց թագավորին, և վերջինս հրամայում է, որ նրան սպանեն: Մամգունը, սակայն, իր գերդաստանով փախչում և գնում է պարսից Արտաշիր թագավորի մոտ: Ճենաց թագավորը պատգամաբերներ է ուղարկում Արտաշիրի մոտ, որ վերջինս իրեն հանձնի Մամգունին: Մինչ պատգամաբերները տեղ են հասնում, Արտաշիրը վախճանվում է, և գահ բարձրացած նրա որդին ասում է, որ Մամգունին չի կարող տալ, քանի որ իր հայրն էր նրան ապաստան տվել, և պատգամաբերների միջոցով հանգստացնելով Ճենաց թագավորին՝ ասում է. «...այլ որպեսզի դու հանգիստ լինես, ես նրան իմ աշխարհից հալածեցի արևմտյան կողմը, աշխարհի ծայրը, որ նրա համար մահի հավասար է, ուրեմն թող իմ և քո մեջ պատերազմ չլինի»<sup>2</sup>:

Այսպիսով, Խորենացին Մամիկոնյանների ծագումը բխցնում է Մամգունից և վերջինիս անվամբ է ստուգաբանում և նախարարական այս տան անվանումը:

Մամիկոնյան տոհմանունը, որպես Ճենաց աշխարհից եկած երկու եղբայրների՝ Մամիկի և Կոնակի անունների միահյուսում է ներկայացված Սեբեոսի Պատմությամբ պահպանված այն հատվածում, ուր ասվում է, թե այս երկու եղբայրները Ճենաստանից եկել են Պարսից Արտաշիր թագավորի ժամանակ: Այս մասին պատմել են Հայոց Խոսրով Մեծ թագավորի արքունիքը եկած պատգամաբերները՝ ասելով, որ իրենց երկրում՝ Ճենաց աշխարհում, այս մասին գուսանները երգելով պատմում են, որ Մամիկն ու Կոնակը ապստամբել են

---

<sup>2</sup> Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, աշխտ. Մտ. Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 271, գիրք Բ, գլ. ՁԱ:

Ճենաց թագավորի դեմ, որը իրենց համամայր եղբայրն էր, սակայն պարտվելով՝ ապաստանում են Արտաշիրի մոտ: Ճենաց թագավորը դեսպաններ է ուղարկում՝ պահանջելով հանձնել ապստամբ երկու եղբայրներին: Պարսից թագավորը, սակայն, նրան պատասխանում է, որ այս երկու եղբայրների պատճառով թող խաղաղությունն իրենց միջև չվրդովվի և որ ինքը նրանց կուղարկի աշխարհի եզրը, այնտեղ, ուր արևը մայր է մտնում, և իր զորականներին պատվիրում է նրանց տանել Հայաստան, և այս երկու եղբայրներից է սերում Մամիկոնյան տոհմը<sup>3</sup>:

Այս ավանդության մի առավել հեռավոր արձագանքն է Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» գործում Դեմետրեի և Գիսանեի մասին պատմվող զրույցը, թե նրանք երկու եղբայրներ էին, որոնք Հնդկաց աշխարհից դարձյալ փախչելով եկել են Հայոց աշխարհը<sup>4</sup>:

Ժողովուրդների երևակայության մեջ զարմանահրաշ մի հմայք, գորություն և ձգող գրավչություն ունեն հեռավոր երկրները: Հայ մատենագրության մեջ հեռավոր երկիր հասկացությունը կապվում է Ճենաց աշխարհի՝ Հնդկաստանից մինչև Չինաստան ձգվող տարածքի հետ, որը մեր մատենագրության մեջ և ժողովրդական մտածողությունում ներկայացվում է որպես կատարյալի չափանիշ մի շարք հասկացություններում, ինչպես որ անպատմելի և անհավանական գեղեցկությունն է անվանվում «չնաշխարհիկ»՝ Չին աշխարհի գեղեցկություն: Դարձյալ զարմանահրաշ գեղեցկություն ունեցող սիրամարգը, որով հաճախ զարդարվում են մեր ձեռագրերի մի շարք շքեղ խորաններ, ծագում է պարսկերեն *sin*՝ չին և *murg*՝ թռչուն բառերից: Սիրամարգն իր հերթին, նույն այս երևակայությամբ, գեղարվեստական պատկերավոր ընդհանրացվածությամբ, իբրև հրաշագեղ մի թռչուն՝ մեր հեքիաթներում հանդես է գալիս որպես Սինամ հավք:

<sup>3</sup> Պատմութիւն Սեբեոսի, աշխտ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 56-57:

<sup>4</sup> Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, աշխտ. Վ. Վարդանյանի, Երևան, 1980, էջ 20:

Համանման ձևով նույն ծագումն ունի և «ճենապակի» բառը՝ որպես ճենաց աշխարհից բերված ապակի:

Ավանդույթունը, այսպիսով, ցանկանալով առավել մեծ հմայք հաղորդել Մամիկոնյան տոհմին, հեռավոր ու անզուգական հմայք ունեցող այս երկրի հետ է կապում Հայոց աշխարհի պաշտպան և ապավեն Մամիկոնյան տան ծագումը:

Պատմիչները թեև գրում են, որ նրանք Հայոց աշխարհում հաստատվել են Տրդատ Մեծի և կամ էլ նրա հոր՝ Խոսրով Մեծի ժամանակ, սակայն ոսկեդարյան մեր մատենագիրներից Ագաթանգեղոսի ու Բուզանդի վկայություններից երևում է, որ Արշակունիների թագավորության սկզբից իսկ նրանց է վստահված եղել հայոց սպարապետությունը:

Բուզանդը շարունակ շեշտում է Մամիկոնյանների թե՛ հնուց ի վեր սպարապետության պաշտոն ունենալը և թե՛ բացառիկ քաջությունն ու նվիրվածությունը Հայոց աշխարհին և գահին: Երբ զոհվում է սպարապետ Վաչե Մամիկոնյանը, նրա որդուն, որ «փոքր մանուկ էր, հայրենական գահն ու բարձն էին տալիս, իր պապի անունով կոչվում էր Արտավազդ: Թագավորի առաջ նրա գլուխն էին դնում հոր պատիվը, նրան տալիս էին սպարապետությունը, որովհետև մեծ վաստակավորի որդի էր, վաստակավոր տոհմից, իսկ նրանց տոհմում ուրիշ չափահաս մարդ չգտնվեց, որովհետև մեծ պատերազմում մեռել էին»:

Պատմիչն այնուհետև ասում է, որ Հայոց Խոսրով թագավորը և Վրթանես քահանայապետը պատվիրում են այնպես «պատանի Արտավազդին սնուցանել, որպեսզի մեծանալով իր նախնիների և իր հոր տեղը բռնե, քաջության գործեր կատարե ամենատեր Քրիստոսի համար և իր մարմնավոր բնիկ տերերի՝ քաջարանց Արշակունիների համար, ժողովրդի կյանքն ու տները պաշտպանե, որբերին ու այրիներին խնամակալ լինի և իր նախորդների քաջության գործերը կատարե, նրանց սպարապետության և անվանի գորավարության հաջորդը լինի մինչև իր կյանքի վերջը»<sup>5</sup>:

---

<sup>5</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 47:

Արշակ Երկրորդը, ժառանգելով Արշակունյաց գահը, վերահաստատում է նախարարների իրավունքները: Բուզանդը, գրելով տարբեր նախարարությունների մասին, նրանց ներկայացնում է տարբեր բնորոշումներով, որոնց շարքում առանձնանում են հատկապես Մամիկոնյաններին նվիրված հետևյալ տողերը. «Նույնպես և սպարապետության՝ զորավարության գործում, ճակատ առ ճակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փառավոր ու ազնվագգի, աղավնակիր դրոշակներով, արծվի՝ վարուժանի նշաններով, աներկյուղ ու քաջասիրտ նախամարտիկ, քաջանուն, բարենշան, բարեհամբավ ու բարեգործ, պատերազմական գործերում հաջողակ Մամիկոնյանների ցեղից, բուն նախնյաց կարգերի համաձայն, որին երկինքը միշտ և հանապազ պարգևում էր հաղթության և քաջության բարի անուն պատերազմական գործերում, և տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր գործերի վրա»<sup>6</sup>:

Ինչպես երևում է Ագաթանգեղոսի Պատմությունից, սպարապետության պաշտոնը Մամիկոնյաններին է հանձնված եղել նաև Տրդատ Մեծի ժամանակ: Պատմիչը գրում է, որ երբ Գրիգոր Լուսավորիչը ցանկանում է առանձնանալ և ճգնակեցությամբ ապրել, Տրդատը Սուրբ Գրիգորի երկու որդիներին Բյուզանդիայից Հայաստան բերելու համար ուղարկում է «երեք ավագ, փառավոր, պատվական մարդկանց», որոնցից «առաջինի անունն էր Արտավազդ, որը Մեծ Հայքի բոլոր գործերի սպարապետն էր»<sup>7</sup>: Ճիշտ է, այստեղ Արտավազդի համար չի ասվում, թե նա Մամիկոնյան է, սակայն նա Վաչե Սպարապետի հայր և մանուկ Արտավազդի պապ Արտավազդն էր: Նաև, ինչպես նշում է Գ. Աբգարյանը, Ագաթանգեղոսի պատմության հին հունական և արաբական խմբագրություններում այս Արտավազդը Մամիկոնյան է անվան-

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>7</sup> Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, աշխտ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 479:



վում<sup>8</sup>:

Մամիկոնյանների՝ սերնդեսերունդ Արշակունյաց գահի սպարապետ լինելն է շեշտում և Մուշեղ Մամիկոնյանը, երբ բռնելով Պապ թագավորի ձեռքը, երդվում է հավատարմորեն ծառայել՝ ասելով. «Ես կապրեմ ու կմեռնեմ քեզ համար, ինչպես իմ նախնիները քո նախնիների համար, ինչպես իմ հայրը քո հոր՝ Արշակի համար, ես էլ նույնպես կմեռնեմ քեզ համար»<sup>9</sup>:

Մամիկոնյանների՝ սերնդեսերունդ Արշակունիներին ծառայելն է շեշտում և Մանուել Մամիկոնյանը Վարազդատ թագավորին ուղղված խոսքում, որը նենգաբար սպանել էր Մուշեղ Մամիկոնյանին: Վարազդատին նա ասում է. «Մենք բոլոր տոհմով հին ժամանակներից ի վեր հավատարմությամբ ծառայել ենք ձեզ՝ Արշակունիներիդ, մեր կյանքը զոհել ենք ձեզ համար, ապրել ու մեռել ենք ձեզ համար: Մեր բոլորի հին նախնիքը պատերազմների մեջ ընկան ձեզ համար. Վասակը՝ Մուշեղի հայրը, կորավ Արշակ թագավորի համար, և մենք միշտ աշխատել ենք, չարչարվել ենք ձեր ցեղի թագավորության համար: Արդ՝ փոխանակ մեզ վարձատրելու մեր ծառայությունների համար՝ դուք՝ Արշակունիներդ, կոտորեցիք նրանց՝ ուլքեր թշնամիների կողմից չմեռան ու կենդանի մնացին»<sup>10</sup>:

Չնայած այս հանգամանքին՝ Մամիկոնյանները երբեք չդավեցին հայոց գահին: Մուշեղ Մամիկոնյանը նենգաբար սպանվելուց առաջ ցավով ասում է. «Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու, քրտինքս նետերի սլաքներով սրբելու վարձատրությունն ա՞յս եղավ: Բայց այս մահը երանի թե ձիու վրա ինձ հասներ...»<sup>11</sup>:

Սպարապետության աստիճանում Մուշեղին հաջորդած

---

<sup>8</sup> Տե՛ս Գ. Աբգարյան, Մամիկոնյանների գրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ, Բանբեր Մատենադարանի, հտ. 7, Երևան, 1964, էջ 248:

<sup>9</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, էջ 299:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 367:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 363:

Մանուել Մամիկոնյանն էլ վատթար մահ է անվանում անկողնում խաղաղ մահանալը, ասելով. «Մանկությունից հետ ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերք հանձն առա քաջությամբ, և ինչու ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու, քան թե այսպես անասունի պես մեռնեի: Որքան լավ կլինեիր, եթե պատերազմի մեջ մեռնեիր աշխարհի համար, որպեսզի եկեղեցիները և Աստծո պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինեիր: Ո՞ւր էր, թե ինձ վիճակվեիր մեռնել մեր աշխարհի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդոց համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես շատ հանդուգն էի ինձ պահում պատերազմների մեջ, բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»<sup>12</sup>:

Ընդգծված այս կապակցության մեջ, ինչպես նաև մի շարք այլ դեպքերում, Մամիկոնյանները շեշտում են իրենց բնիկ տերերին, կամ ինչպես գրաբարում է ասվում՝ «բնակ տերանցն» ծառայելու մասին:

Արդ, ինչ է նշանակում բնիկ տեր: Այս շրջանում Հայաստանի վրա իրենց գերիշխանությունն էին փորձում տարածել Պարսկաստանն ու Բյուզանդիան: Եվ ինչպես նշում է Մ. Աբեղյանը, այս բնիկ տեր արտահայտությունը Մամիկոնյանները շեշտում են, որ իրենք ծառայում են միայն իրենց բնիկ տիրոջը՝ Հայոց Արշակունի թագավորին և ոչ թե բյուզանդական կայսրին կամ Պարսից թագավորին, եթե նրանք անգամ տիրեին էլ մեր երկրին<sup>13</sup>:

Իրենց բնիկ Հայոց տերերին միայն ծառայելու այս հավատամքը Մամիկոնյանները հավաստեցին Արշակունյաց թագավորության անկումից հետո՝ պարբերաբար ապստամբություն դրոշմ բարձրացնելով այնքան ժամանակ, մինչև 885 թ. նորոգվեց Հայոց պետականությունը Բագրատունյաց թագավորությունը:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 393:

<sup>13</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Ա, Երևան, 1966, էջ 243:

Մամիկոնյանները, սակայն, մի եզակի բացառություն չէին, այլ հավաքական մարմնավորումը հայ զինական ոգու, այն ոգու, որով հայ զինվորները, իրենց հակառակորդին գետին գլորելով, ասում էին. «Մեր Արշակ թագավորի համար»<sup>14</sup>:

Բուզանդը գրում է, որ Շապուհը, զարմացած հայոց զորքի այս նվիրվածությունից, ասում է. «Այսքան ժամանակ է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, գտնվում է Անդամըն բերդում, Խուժաստան երկրում, բայց նրանք իրենց սիրուց այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր, կամ իրենց հետ գնդի մեջ է գտնվում, իբրև պատերազմին գլուխ կանգնած, և իրենք նրա առաջ իրեն են ծառայում: Այո, ասում էր նա, երանի նրան, որ Հայոց գնդի տերն է, այսպիսի տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի»<sup>15</sup>:

Բուզանդն իր Պատմության Հինգերորդ դպրության 20-րդ գլխում Մուշեղ Մամիկոնյանի օրինակով ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի իր կյանքը հայրենիքի պաշտպանությանը նվիրաբերող զինվորը: Աբեղյանը, վկայակոչելով այս գլխի «Թույլ չէր տալիս, որ թեկուզ մի կորու չափ գետին Հայոց աշխարհի սահմաններից խլվի» խոսքերը, գրում է. «Այս հերոսը, որ ապրում է իր տիրոջ և աշխարհի համար, և չի թողնում անգամ մի կորու չափ գետին հայոց երկրից վտարել, այսինքն՝ օտարացնել: Դա արդեն հայրենասիրությունն է, վիպական հերոսական անձնավորության աղբյուրը»<sup>16</sup>:

Բուզանդի պատմության այս գլխի մասին էլ Ա. Այվազյանը գրում է, որ այն «բավական ամփոփ և հստակ վկայաբերում է 4-5-րդ դարերի հայ զինվորականության պրոֆեսիոնալ արժեհամակարգը, որը բաղկացած էր Արշակունյաց Հայաստանում արտոնված, կենսագործվող և քարոզվող պետական գաղափարախոսության ամենակարևոր տարրերից:

<sup>14</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 309:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 311:

<sup>16</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Ա, էջ 258:

Այդ գաղափարական-բարոյահոգեբանական արժեքները կոչված էին դաստիարակելու հատկապես սպայակուլտի շարքերը համալրող պատանիներին հայկական բանակի ելակետային նպատակների և ավանդական վարքուբարքի համաձայն, ինչպես նաև՝ ընդգծելու հայրենիքի և ժողովրդի առջև հայ ռազմիկի ունեցած պարտականությունները»<sup>17</sup>:

Եվ իր բնիկ Արշակունի տերերին ծառայող Հայ զինվորությունը չէր համակերպվելու հայրենիքի անկախություն կորստի հետ, երբ Հայոց աշխարհը նախ, Բուզանդի բնորոշմամբ, հնացած ձորձի նման բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, որի ժամանակ Հայոց թագավորությունը վերացվեց Բյուզանդիայում և ապա 428 թ. Արշակունյաց թագավորությունը վերջ գտավ նաև պարսկական իշխանություն մասում:

Արշակունյաց թագավորության անկումից կես դար էլ չանցած՝ Հայոց նախարարները պարզեցին ապստամբության գրոշը, որի գրոշակակիրը դարձյալ Մամիկոնյան տնից էր:

---

<sup>17</sup> Արմեն Այվազյան, Հայ զինվորականության պատվի վարքականունը 4-5-րդ դարերում, Երևան, 2000, էջ 9:

**Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք**  
**Ե Վ**  
**Հ Ա Յ Ո Ց Պ Ա Տ Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը**

Անմահ Վարդանանք, Ձեր հիշատակը թող  
զարթնեցնես մեր մեջ որդիական սիրո ամենաջեր-  
մեռանդ գգացումներ և մենք սովորենք մեր  
հարազատ մոր խանդակաթ աչքերից կաթած մի  
շիթ արցունքն ավելի բարձր գնահատել, քան  
աշխարհիս բոլոր մարգարիտներն ու գանձերը,  
կյանքի ու մահվան ասպարիզում Ձեզ առաջնոր-  
դող խաչի դրոշը թող շարունակես առաջնորդել և  
մեզ, այն երկնային իմաստությամբ լուսավոր-  
ված լինին մեր մտքերը, որ ուսուցանում է ի  
ՏԷր միայն պարծիլ, այն անմահական հավա-  
տով ջերմանան մեր սրտերը, որի դեմ անզոր են  
հրեշտակը և մարդիկ, սուր ու հուր և  
ջուր և ամենայն դառն հարուածք:

**ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ**

Հայոց թագավորության անկումից հետո Հայաստանում  
իշխանությունն անցավ նախարարներին, որոնք ներքին  
ինքնուրույնություն ունեին և Պարսից արքունիք տալիս  
էին միայն երկրի տարեկան հարկը:

Պարսից արշավանքներին իսկ Հայոց այրուձին մասնակ-  
ցում էր որպես առանձին զինական միավոր և ամեն ռազմեր-  
թից առաջ առանձնակի պատիվներով էր ընդունվում Արյաց  
արքայի կողմից: Ինչպես Եղիշեն է գրում, Հայոց Արտաշես  
թագավորի գահընկեցությունից հետո «իշխանությունն ան-

ցավ Հայոց նախարարներին, որովհետև թեպետ հարկը Պարսից արքունիք էր գնում, սակայն Հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»<sup>18</sup>: Հայոց այրուձիհին Տիգրանում ցույց տրվող պատվավոր ընդունելութան մասին էլ Եղիշեն գրում է. «Առաջվա ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից ուրևէ պատվավոր զորավարի առաջնորդութամբ հեծելազոր էր գնում Դուռը, թագավորը մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը, և երկու-երեք անգամ նույնն էր անում, զորահանդեսն էլ թագավորն ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը» (էջ 89):

Հայ նախարարական տների՝ դարերի հուղվույթում մինչ պատմության թատերաբեմից հեռանալը Հայաստանի ունեցած ներքին այս ինքնուրույնությունը շեշտելով՝ ն. Ադոնցը գրում է. «Շնորհիվ մշտապես սպառազինված ազնվականության, Հայաստանը երբեք այն օրին չի հասել, որ դիաթավալ փռվի հաղթական թշնամու առջև, ինչպես տեսանք այդ նախարարության անկումից հետո: Նրա օրով մեր երկիրը նվաճված չի եղել բառի բուն իմաստով: Հռոմ, Պարսիկ, Արաբ և Բյուզանդիոն չեն կարող պարծենալ, որ նախարարական Հայաստանը պարտված դարձել է նրանց սովորական նահանգը: Դարերի ընթացքում հայ ֆեոդալները կարողացան կռվել և պահել իրենց դիրքը և ազատությունը: Նրանց թշնամի պետությունները ծանր փորձերից հետո ընտելացան մեղմելու իրենց հավակնությունները: Տարեկան տուրք և զինվորական օգնություն, ահա այն երկու համեստ հանձ-

---

<sup>18</sup> Եղիշեն, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, աշխտ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 13: Այսուհետև Եղիշեից ու Փարպեցուց կատարված վկայակոչումների էջերը կներկայացնենք մեջբերումների վերջում:

նառությունները, որոնցով նախարարութիւնը գնում էր իր և երկրի ազատութիւնը արտաքին թշնամուց»<sup>19</sup> :

Նման պայմաններում բնական է, որ հայ նախարարները պետք է մտածեին երկրի անկախութիւնը վերականգնելու մասին նաև հինգերորդ դարում՝ այս նպատակով վարելով համապատասխան արտաքին քաղաքականութիւն թե՛ Բյուզանդական կայսրութեան և թե՛ հարևան երկրների հետ:

Պատմիչների վկայութիւններից երևում է, որ այս հանգամանքը քաջ գիտակցում էին Բյուզանդիան ու Պարսկաստանը և անկախութեան ձգտումները խեղդելուց առավել փորձում էին ուղղորդել իրենց ցանկալի ընթացքով, որը հստակորեն արտացոլվել է թե՛ Եղիշեի և թե՛ Փարպեցու գործերում: Նրանց երկերի գրութեան միջև ընկած է ավելի քան չորս տասնամյակ, և անցնող այդ տարիները ժամանակային առումով որոշակիորեն տարբեր կնիք են թողել երկու պատմիչների գործերի գրութեան վրա: Եղիշեի Պատմութիւնում ամենուր ասես կենդանիորեն ներկա են Արշակունիները, Արշակունյաց թագավորութիւնը, և Վարդանանց ապստամբութիւնն իսկ ասես իրենց բնիկ տերերին՝ Հայոց թագավորներին ծառայելու մի պոռթկում է:

Հայ նախարարների՝ Հազկերտին ուղղված պատասխանի մասին գրում են թե՛ Եղիշեն, թե՛ Փարպեցին: Փարպեցին անգամ չի նշում, թե Հայոց ավագանու և հոգևորականութեան համատեղ պատասխանը որտեղ է գրվել: Եղիշեն, սակայն, ոչ միայն այս նամակն է մանրամասնաբար ներկայացնում, այլև պատմիչի համար առանձնակի խորհուրդ ունի այն հանգամանքը, որ պատասխան այս թուղթը Հազկերտին գրվել է հենց «Թագավորանիստ վայր Արտաշատում» (էջ 57):

Վարդանի և Վասակի վերահսկողութեան ներքո գտնվող բերդերի մասին դարձյալ գրում են թե՛ Եղիշեն և թե՛ Փարպեցին: Փարպեցին այս ամբողջութիւնները եթե կարևորում է

---

<sup>19</sup> Ն. Արմնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 20-21:

ուսումնասիրատեղիական տեսանկյունից, ապա Եղիշեն հոգևոր մեծ խորհուրդ է գտնում այն իրողությունում, որ ուխտապահ նախարարների ձեռքում էին «թագավորանիստ տեղերը» (էջ 201):

Ավարայրից առաջ Հայոց զորքի համատեղ հավաքվելը ևս Եղիշեն ներկայացնում է ասես թագավորական զորածողով. «Թեպետև թագավոր չունեին իրենց առաջնորդ և ոչ էլ դրսից որևէ օգնական օտարներից, բայց բոլոր նախարարներն անձնական առաքինությամբ և սուրբ վարդապետների մխիթարությամբ իրենց բոլոր զորքերի հետ միասին ամեն մեկն իր տնից շտապով եկան, մի տեղ հավաքվեցին, նաև ուրիշ շատ հեծելազոր, որոնք թագավորական տնից էին» (էջ 149):

Անգամ Վասակի դավաճանությունը թե՛ Եղիշեն և թե՛ հատկապես Փարպեցին որոշակիորեն պայմանավորում են Հայոց թագավոր դառնալու նրա ցանկությամբ: Եղիշեն գրում է, որ Պարսից աշխարհի հազարապետ Միհրներսեսը Վասակին խոստացավ «ավելի մեծ իշխանություն, քան թե ուներ, և նրա ուշքը դարձրեց այնպիսի սնոտի բաների վրա, որ իր իշխանությունից վեր էր, իբր թե նրան վայել է թագավորական վիճակի հասնել. միայն թե այս գործի հնարը գտնի, թե ինչպես պետք է քանդել Հայոց ուխտի միաբանությունը, և թագավորի կամքը կատարվի այն երկրում» (էջ 183, 185):

Այս մասին առավել հստակորեն է գրում Փարպեցին: Ապստամբության ճնշումից հետո, երբ Տիզբոն արքունի ատյան են տարվում հայ նախարարներն ու հոգևորականները, այնտեղ է շտապում և Վասակ Սյունին: Տիզբոնի ճանապարհին նրան է հանդիպում շղթայակապ Ղևոնդ Երեցը և նրան հանդիմանելով ասում է. «Այն դեռ, որ խաբելով հրահրեց քեզ նենգել Սուրբ Ավետարանին տված ուխտի դեմ, հիմա էլ քեզ մտածել է տալիս, թե այժմ միայն Հայոց աշխարհի թագավորությամբ Արյաց արքունիքը կարող է ա՛նել քո վաստակների արժանի հատուցումը: Նրանք փոխարե՛



նը քեզ ոչինչ չեն կարող տալ: Բայց, արդարև, թե որ դու կենդանի, գլուխդ ուսերիդ վրա տանես Հայաստան, կնշանակի՝ Աստված ինձ հետ չի խոսել»<sup>20</sup>:

Վասակի օրինակով նաև երևում է, թե մարզպանական իշխանությամբ ինչ աստիճանի ինքնուրույնություն ուներ Հայաստանը: Փարպեցին Վասակի՝ արքունիք ներկայանալու մասին գրում է. «Իսկ Այոնյաց ուխտանենգ իշխան Վասակը, իր վրա ձգելով թագավորից ստացած բոլոր պատվանշանները, եկավ, թագավորական պալատ մտավ մեծ շքեղությամբ: Քանզի թագավորներին վերաբերվող պատիվներից զատ, արքունի մի պատիվ չկար, որ նա չունենար, և կարծում էր, թե միայն Հայոց մեծ աշխարհի թագավորությունն է մնում, որին պիտի արժանանար» (էջ 195):

Հագկերտի դատական ատյանում հայ նախարարներից Արշավիր Կամսարականի՝ Վասակին ուղղված խոսքերից ևս երևում է, որ Վասակն ունեցել է քաղաքական որոշակի ծրագիր, որը, սակայն, չի կարողացել իրականացնել:

Այսպիսով, Հայոց թագավորութայն վերականգնման ձգտումը և երկրի ներքին ինքնուրույնությունը պահելու վճռականությունը բավականաչափ մեծ են եղել Ավարայրին նախորդող տարիներին, որի համար էլ Հագկերտը, երբ կարողանում է հաղթել քուչաններին, ամրացնել երկրի սահմանները և հասնել Բյուզանդիայի չեզոքությանը, իսկույն ձեռնամուխ է լինում Հայաստանի ներքին ինքնավարութայն վերացմանը՝ այս ճանապարհի գլխավոր խոչընդոտ դիտելով Հայոց եկեղեցին:

Հագկերտը Հայաստան է ուղարկում Դենչապուհին, որպեսզի աշխարհագիր կատարի և նոր հարկերի ծանրութայն տակ գցի երկիրն ու եկեղեցին, որին այնուհետև հաջորդում է հավատափոխութայն պահանջի հրովարտակը: Հատկանշական է, որ Վարդանանց պատերազմի պատմութայն այս երկ-

---

<sup>20</sup> Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, աշխտ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 183:

որորդ գլուխը՝ եղանակը (Եղիշեի մատյանում գլուխներն անվանվում են եղանակ), Եղիշեն սկսում է իմացյալ մահվան մասին թեևավոր այն խոսքերով, որոնք քանիցս հնչելու էին Հայոց պատմութեան ընթացքում. «Ինչպես որ հնում մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահութուն: Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից, իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում» (էջ 29):

Այս խոսքերը միայն պատմիչի գեղարվեստական մտածողութունից ու երևակայութունից չեն բխել, այլ եղել են ժամանակի ընդհանրացած այն մտածողութունը, որով Հայոց ավագանին ու հոգևորականութունը մերժելով հավատորացութեան պահանջը, Հազկերտին ուղղված թղթում գրում են. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված» (Եղիշե, էջ 81):

Իմացյալ մահվան և հայրենի հավատից չզատվելու այս հաստատակամութունը որևէ հակասութեան մեջ չի գտնվում Տիգրանում կատարված առերես ուրացութեան հետ: Ավելին, թե՛ Եղիշեն և թե՛ Փարպեցին այս ուրացութունն ինչ-որ տեղ անգամ համարում են հոգևոր անձնագոհութուն և ինքնագոհողութուն, որովհետև հայ նախարարները ոչ թե անհատապես իրենց հոգևոր փրկութեան մասին էին մտածում, այլ թե ինչ կլինի իրենցից հետո առանց առաջնորդութեան մնացած ժողովրդի վիճակը, եթե իրենք միայն իրենց մասին մտածելով նահատակութեան պսակն ընդունեն, փրկեն իրենց հոգիները և երկնային արքայութեանն արժանանան:

Նույն այս փաստարկով են Հայոց նախարարները դիմում Վարդանին առերես ուրացութեան համար՝ ասելով. «Նայի՛ր հանգիստ մտքով, տես՛ առաջիկայում բյուր մարդկանց պատահելիք չարաչար աղետները, հիշի՛ր մայրերի հառաչանքները, մտքի՛դ բեր մանուկների ողբ ու կոծը, ծերերին ու պառավներին բռնութեամբ օտարութեան քշելը և այլ այսպիսի անհնարին ու չար վշտերը, որ պատահելու են բոլորին»

(Փրպ. 117):

Մամիկոններից տերը Հարկադրյալ Համաձայնում է, երբ Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհների նախարարները Սուրբ Ավետարանի վրա երգվում են, որ իրենց ուրացությունն առևերես է լինելու և որ իրենք երբ հասնեն իրենց երկրները, դուրս են քշելու մոզերին և պայքարի են առաջնորդելու ժողովրդին:

Վարդան Մամիկոնյանը, սակայն, բոլորից առանձնանում է ոչ միայն սկզբնապես դիմադրելով առևերես ուրացությանն իսկ, այլև դրանից հետո Հազկերտի առջև ասված հետևյալ խոսքերով. «Իմ նախնյաց Հպատակությունն ու վաստակը, որ եղել են այս արքունիքի ու ձեր թագավորության հանդեպ այն ժամանակից ի վեր, երբ հաստատված են եղել ձեր տիրապետության ներքո, դուք բոլորդ գիտեք քաջագույն, և ես չէ, որ այդպիսի բաներին պետք է մեկ առ մեկ տեղեկացնեմ ձեզ, որ ավելի ստույգ գիտեք, քան թե ինքս: Իսկ թե պետ ես շատ նվազ եմ, քան իմ նախնիները, մտքուժամ դրել էի, որքան կարողություն կա իմ մեջ, արդար վաստակներով արժանանալ ձեր ուշադրությանը: Եվ ուր գործով հասել էի ըստ ձեր հրամանի, ձեր գորագլուխներն ու իմ ընկերներն են տեսել իմ գործն ու վաստակը, որ կատարում էի անվրդով, սրտիս ուժով: Բայց այժմ այսպես եմ կամենում. կջանամ, որ եթե մինչև այժմ չեմ կատարել որևէ գործ՝ արժանի անվան ու գովասանքի, այսուհետև ամենայն գորությամբ ու ուժով հնար գտնեմ, Աստծո օգնությամբ կատարել այնպիսի մի գործ, որ ոչ միայն ձեր Արյաց, այլև կայսեր արքունիքում և ուրիշ ազգերի մեջ պատմվի նրա համբավը Հար-Հավիտյան» (Փրպ. էջ 127):

Այսպիսով, Հազկերտի առջև Հայոց սպարապետը թեկուզ և առևերես ոչ թե կրակն ու արեգակն է փառաբանում, այլ այլաբանորեն ասում է, թե մի այնպիսի գործ է կատարելու, որ անջինջ հիշատակ է թողնելու, և այդ գործն էր Ավարայրը:

Ավարայրը որ միայն ուխտապահ նախարարներով չէր պայմանավորված, այլ համաժողովրդական ընդվզման արտա-

Հայտուեթյուն էր, երևում է Հայոց աշխարհում առերես ուրացածներին դիմավորելուց: Ասես փլվել էր երկրի ֆեոդալական կառուցվածքը, և մարդիկ բաժանվում էին ոչ թե ըստ դասերի՝ շինականից ու ազատից մինչև իշխան ու նախարար, այլ երկու խմբի՝ ուրացողներ և ոչ ուրացողներ:

Ավարայրն սկսվեց Անգղ գյուղաքաղաքում մոգերին քշելու և եկեղեցական արարողությունները վերականգնելու, և այստեղ է, որ պարսից մոգպետը հասկանալով, որ իրենք չեն հաղթելու գալիք Ավարայրում, ասում է. «Եթե աստվածներն իրենք էլ մեզ օգնության գան, հնարավոր չէ, որ Հայաստանում հաստատություն գտնի մոգական կրոնը: ...Մարդիկ, որոնք ո՛չ շղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից երկյուղ կրում և ո՛չ հարստությունը բանի տեղ դնում և, վերջապես, որ բոլոր չարիքներից ամենից վատթարն է, մահը գերադասում են կյանքից, ո՞վ է, որ կարող է նրանց դիմադրել» (Եղիշե, 119, 121):

Ասես մոգպետի խոսքերի հավաստումը լինեն հայրենի երկրից օտար մոգերին ու գործին դուրս քշող Հայ ապստամբների հետևյալ խոսքերը. «Միայն թե քաջությամբ մեռնենք, միայն թե անուն ու հոգի ժառանգենք, որ մեր մեջ կենդանի լինի Քրիստոսը, որի համար հեշտ է մյուս անգամ նորոգել մեզ հողից, ինչպես և նախկին բոլոր մեռածներին, և յուրաքանչյուրին հատուցանել իր գործերի համեմատ» (Եղիշե, էջ 137):

Վարդանանք չեն երկնչում, երբ Հայոց պատմության մեջ այդ էլ որերորդ անգամ Բյուզանդիան օգնություն է խոստանում և նենգաբար խաբում: Ինչպես Եղիշեն է գրում. «Թեպետև տեսնում էին իրենց սակավությունն ու երկու թագավորների միաբանությունը, բայց և այնպես ամենևին չէին վհատվում ու դողում, այլ նախկին ուխտադրության համաձայն խիզախում էին» (էջ 147):

Ինչպես որ համաժողովրդական ընդվզման բարձրակետն էր Ավարայրը, այնպես էլ այդ ընդվզման գրական արտահայտության բարձրակետն են Վարդանի խոսքը ճակատամար-

տից առաջ և ճակատամարտի նկարագրությունը, որը թեև մեկ էջից չի անցնում, սակայն իր այս սեղմությունը և ռազմի պատկերների ընդհանրացված նկարագրությամբ անջնջելիորեն դրոշմվել է սերունդների սրտում:

Ճակատամարտից առաջ հիշեցնելով Հայ զինվորներին մինչ այդ իրենց մղած կռիվները՝ Վարդանը նրանց հորդորում է մինչ այդ եղած արիության գործերին վախկոտություն չխառնել և առավել անձնուրացությունը մարտնչել Հանուն Հայրենիքի ու եկեղեցու. «Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ, մանավանդ որ ձեզանից շատերը քաջությունը ինձնից ավելի լավ եք և Հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոժար կամքով կարգեցիք ինձ ձեզ առաջնորդ և զորազուլիս, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացու մարդու ահուելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե Հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք» (Եղիշե, էջ 205, 207): Եվ որպես ընդհանրացում եզրափակելով իր խոսքը, Ավարայրի հերոսն ասում է. «Վախը թերահավատությունն չէ. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից, նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից (էջ 211):

Եղիշեն Վարդան Մամիկոնյանի ու Ղևոնդ Երեցի խոսքերից հետո բերում է պարսից զորահրամանատար Մուշկան Նյուսալավուրտի խոսքերը, որոնք առաջին երկուսի հակապատկերն են և հիմնված են ոչ թե սիրո և անձնազոհության, այլ սպառնալիքի ու պատժի վրա:

Մեկ օր՝ առավոտից մինչ երեկո տևած Ավարայրի ճակատամարտը Եղիշեն ներկայացնում է հետևյալ հատվածում.

«Եվ երբ այս այսպես պատրաստվեց, երկու կողմերն էլ սրտմտուլթյամբ և մեծ բարկուլթյամբ զայրացան ու գազանացած զորուլթյամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր ինչպես իրար խառնված ամպերի միջից, և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր: Նաև բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից: Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, և թե ինչպես վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները:

Այնտեղ պետք էր տեսնել, թե ի՞նչ մեծ տագնապ և անչափ իրարանցման սրտնեղուլթյուն կար երկու կողմերում էլ, երբ հանդուգն հարձակումով իրար էին բախվում. որովհետև թանձրամիտները հիմարանում էին, և վախկոտները վհատվում. քաջերը խիզախում էին, և անվեհեր կտրիճներն աղաղակում: Եվ ամբողջ բազմուլթյունը իրար գլխի խմբվելով՝ գետն ամեն կողմից փակեցին, և գետի դժվարուլթյունից վախեցած Պարսից զորքն սկսեց իր տեղում վխտալ: Իսկ Հայոց զորքն անցավ գետը, և ձի նստած մեծ զորուլթյամբ հարձակվեց: Ուժգին թափով իրար զարկվելով՝ երկու կողմից էլ բազմաթիվ վիրավորներ գետին ընկած թփրտում էին:

Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ, որ Պարսից զորքի ընտիր-ընտիր քաջ զորականները Հայոց զորքի ձախ կողմն ընկճեցին. նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և Պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քչեց գազանների կողմը և շուրջը պտտելով կոտորեց մինչև նույն տեղը: Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպուլթյունը քայքայվեց-ցրիվ եկավ, և նա դեռևս պարտուլթյուն չկրած՝ փախուստ տվեց:

Ապա աչքերը վեր բարձրացրեց Մուշկան նիսալավուրտը

և տեսավ, որ Հայոց զորքից ոմանք բաժանվել և ետ են ընկել լեռների հովիտներում: Ուստի և աղաղակ բարձրացրեց, քաջակերեց իր շուրջը գտնված Արյաց զորքին, որոնք կանգնած էին Վարդգանի գնդի հանդեպ: Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտված էին զգում, և ընկած դիակների թիվն այնքան մեծ էր, որ նմանվում էր խորդուբորդ քարակույտերի:

Երբ այս բանը տեսավ Մուշկան Նիսպավուրտը, սպասում էր Արտաշրի գազաններին, որը նրանց վրա նստած էր բարձր դիտանոցում, ինչպես միջնաբերդում և գալարափողերի բարձր ձայնով շտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զորքերով շրջապատեց նրան:

Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պսակը:

Եվ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարածամեց և երեկոյան դեմ դադարեց. շատերն իրենց մահվան օրհասը գտան. մանավանդ որ ընկածների դիակներն այնպես խիտ էին ու իրար մոտ թափված, ինչպես անտառի կտրատված փայտերը:

Այնտեղ պետք էր տեսնել նիզակների կոտրատումն ու աղեղների խորտակումը. ուստի և չէին կարողանում ստույգ որոշել երանելիների սուրբ մարմինները. և սաստիկ խուճապ ու իրարանցում էր երկու կողմերի ընկածների համար: Իսկ ովքեր [կենդանի] էին մնացել, ցիրուցան եղան ամուր ձորերի լեռնադաշտերում. և երբ պատահում էին միմյանց, դարձյալ սպանում էին մեկմեկու: Եվ այսպես դաժան գործը շարունակվեց մինչև արևի մայր մտնելը:

Եվ որովհետև ժամանակը դարնանային էր, ծաղկալից դաշտերը լցվեցին հորդահոս արյունով: Մանավանդ երբ մեկը տեսնում էր ընկած բազմաթիվ դիակների կույտերը՝ սիրտը կտրատվում էր, և աղիքները գալարվում, լսելով խոցվածների մրմուռը, և ջարդվածների մոռնչյունը, վիրավորների թավալվոր սողալն ու շարժվելը, վախկոտների փախուս-

տը, վհատվածների թաք կենալը, անարի մարդկանց սրտաբեկությունը, թուլասիրտների ճիչերը, սիրելիների ողբը, մերձավորների սուգը, բարեկամների վայնասունը: Որովհետև ո՛չ թե մի կողմը հաղթեց, մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին:

Բայց որովհետև Հայոց զորավարն ընկել էր մեծ պատերազմում, այնուհետև էլ ոչ ոք գլխավոր չկար մեջտեղում, ուրին հենված ժողովներն մնացած զորքերը: Թեպետև ողջ մնացածներն ավելի շատ էին, քան թե մեռնողները, սակայն նրանք ցանուցիր եղան և քաշվեցին երկրի զանազան ամուր տեղերը և ուժով տիրեցին շատ գավառների ու բերդերի, ուրոնք ոչ ոք մինչև իսկ առնել չէր կարողանում» (Եղիշե, էջ 235-241):

Հայոց բանակից զոհվածների թիվը 1036 էր, իսկ հակառակորդի բանակից՝ 3544 հոգի: Եղիշեն գրում է, որ երկու կողմերն էլ պարտվեցին, հայերը պարտվեցին, որովհետև այս ճակատամարտում ընկավ նրանց հրամանատարը՝ քաջն Վարդան Մամիկոնյանը, իսկ պարսիկները պարտվեցին, որովհետև նրանք ավելի քան երեք անգամ շատ սպանվածներ էին սպել:

Իր սպարապետի զոհվելուց հետո Հայոց զորքը, փոքր զորաշուկատների բաժանված, ցրվում է երկրի տարբեր կողմերը և սկսում պարտիզանական կռիվներ մղել, ինչպես նաև դիմադրությունը շարունակել՝ ամրանալով երկրի անառիկ բերդերում:

Տեսնելով, որ Ավարայրից հետո ևս չի դադարում համաժողովրդական ապստամբությունը՝ Պարսից արքունիքը հարկադրված զիջումների է գնում՝ ներում շնորհելով ապստամբներին, ինչպես նաև վերահաստատելով քրիստոնեությունն ազատորեն դավանելու իրավունքը:

Եղիշեի մատյանի հերոսականության բարձրակետը եթե Վարդանի խոսքն ու Ավարայրի նկարագրությունն է, ապա հուզական առումով անգերազանցելի է Հայոց աշխարհի



փափկասուն տիկնանց նվիրված հատվածը: Ավարայրի հերոսների քաջության հետ ներդաշնակ մի ամբողջություն են կազմում նրանց տիկնանց անձնագոհ առաքինությունները:

Եղիշեի երկում ասես որպես գործող անձ է հանդես գալիս գարունը և գարնանային եղանակը, և սա միայն այն պատճառով է, որ Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել գարնանը՝ մայիսի վերջին: Գարնանը դիմելն այլաբանական սիմվոլիկ կրկնակի խորհուրդ ունի: Գարնանը նորոգվում է կյանքը, ծաղկում է բնությունը, թռչունները վերադառնում են տաք երկրներից, և նորոգվող կյանքի մեջ Ավարայրի հերոսներն իրենց կյանքն են զոհաբերում հանուն Հայոց աշխարհի գալիք գարունների: Նույն գարունն այլաբանորեն խորհրդանշում է Քրիստոսի հարությունը, երբ ձմեռային քնից՝ մեռելությունից արթնանում է բնությունը, ինչպես գրում է Կոստանդին Երզնկացին, «Այս գարունս զգալուստն Քրիստոսի պատմէ առակօք»<sup>21</sup>:

Եղիշեն Ավարայրը ներկայացնում է գարնան համապատկերում, և Ավարայրի յուրօրինակ մի համարժեքը եղող Հայոց աշխարհի փափկասուն կանանց նվիրված հատվածը ևս միաշաղախում է գարնան, հույսի, զվարթություն և կենսաբերություն պատկերներով՝ պայծառ մի թախիծով և հուզականությունը ներկայացնելով նրանց սպասումը, անարյուն զոհողությունը և հավատարմությունն իրենց սիրելիներին. «Շատ ձմեռների սառուլյցներ հալվեցին, գարուն հասավ, և նոր ծիծեռներ եկան. կենցաղասեր մարդիկ տեսան և ուրախացան, բայց նրանք երբեք չկարողացան տեսնել իրենց անձկալիներին: Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարոտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու: Որսի բարակները վերջացան, և բոլորովին դադարեցին որսորդների արշավանքները: Նրանք հիշվեցին միայն գրված հիշատակարաններով, և ոչ մի տարեկան տոն

---

<sup>21</sup> Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխտ. Ա. Սրսայանի, Երևան, 1962, էջ 150:

նրանց հեռու օտարությունից տուն չբերեց, նրանց ճաշատեղերին նայեցին ու արտասովեցին և բոլոր ատյաններում հիշեցին նրանց անունները: Շատ արձաններ էին կանգնեցված նրանց անվանը, և ամեն մեկի անունը նշանակված էր նրանց վրա» (էջ 409):

Վարդանանց ապստամբությունը նաև յուրօրինակ ձևով կրկնությունը դարձավ Մամիկոնյան տան չորրորդ դարի հերոսական պատմության: Այն, ինչ որ Բուզանդը գրում է Մամիկոնյան սպարապետների համար, նույնը Փարպեցին գրում է Վարդան Մամիկոնյանի համար: Այսպես, երբ Վարդանը հրաժարվում է առերես ուրանալուց, նախարարները խիստ մտահոգվում են, որ հայրենիք հասնելուց հետո իրենց ծրագրերը չեն կարող իրականացնել, քանի որ «բոլորն էին տեսել, գրքերից էլ լրիվ գիտեին, որ այդպիսի գործերը շատ անգամ գլուխ են եկել Մամիկոնյան տոհմի միջոցով և նրա միաբանությամբ» (Փրպ. էջ 117):

Նույն իրավիճակը կրկնվում է, երբ նախարարների՝ հայրենիք վերադառնալուց հետո Վարդանը, հիասթափված նրանց անմիաբանությունից և վստահություն չունենալով նրանց վրա, լավ է համարում օտար աշխարհ գնալը, քան իր ոստանում որպես ուրացող ապրելը: Իմանալով, որ Հայոց սպարապետը հեռանում է երկրից, հավաքված նախարարներին ու հոգևորականներին Վասակ Սյունին ասում է. «Անհրաժեշտ է անմիջապես ընտիր քահանաներից ու հայոց ավագանու տանուտերներից մի քանիսին ուղարկել հայոց գորավար Վարդան Մամիկոնյանի ետևից և աղաչանքով նրանց վերադարձնել այստեղ, քանի որ առանց նրա մեր կամքն ու խորհուրդները չեն իրականանա» (Փրպ. էջ 135):

Վարդանը համաձայնում է ետ վերադառնալ, սակայն ինչպես Մանվել Մամիկոնյանն էր հիշում իրենց տոհմի անձնվեր ծառայությունը Արշակունի թագավորներին և վերջիններիս ոչ երախտագետ վերաբերմունքն իրենց հանդեպ՝ ասելով, թե այսուհետ ևս ծառայելու են Հայոց գահին, թեկուզև նման վերաբերմունքի արժանանան, նույն ձևով, սակայն

արդեն պատմաքաղաքական միանգամայն այլ իրավիճակում, Վարդան Մամիկոնյանն է ասում. «Թող որևէ մեկը չկարծի, թե մենք փախել ենք սրի երկյուղից, որից մեր տոհմի մեջ ոչ ոք ոչ մի ժամանակ չի վախեցել: Իսկ թե ինչպես ընկերոջ շահի համար առավել, քան իր սեփական շահի համար է հոգացել իր անձնականը դրած այս տոհմը, այդ դուք էլ բոլոր հայերդ ճշգրտությամբ գիտեք գրքերի պատմությունից և ձեր ավագների պատմածներից: Բայց ձեր այն նենգավոր խաբեությունից, որ դուք գործել եք միշտ մեր նախնիների նկատմամբ, այդ բոլորը հիշելով էլ գնացինք մեր անձը ազատելու: Դուք շարունակ մեզ մղել եք նեղության և ձեր անձերից հեռու մնալով՝ միայն մեր տոհմին են վիճակվել մեծ վշտերն ու մահերը» (էջ 137):

Հատկանշական է, որ Եղիշեն, խոսելով իր մատյանի գրության պատճառների մասին, հերոսության դրվատմանը հավասարաչափ և անգամ ավելի նշում է դավաճանության անարգման կարևորությունը: Պատմության սկզբում դիմելով այս գործի պատվիրատուին՝ Մամիկոնյան Դավիթ երեցին, ասում է, որ այն գրել է, որպեսզի «շարունակ կարգա, լսելով առաքինի քաջությունը և հետ կացածների վատթարությունը» (էջ 9):

Եղիշեն, ներկայացնելով Տիգրանում կայացած ատյանը և Վասակի դատապարտվելն այնտեղ, այս վեցերորդ եղանակի (գլխի) վերջում գրում է. «Այս հիշատակարանը գրվեց նրա մասին, նրա հանցանքները կշտամբելու և նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ լսի և իմանա այս բանը, նզովք կարդա նրա ետևից և նրա գործերին ցանկացող չլինի» (էջ 283):

Այս հանգամանքն էլ մեծապես պայմանավորել է Եղիշեի մատյանի բնույթը: Նա ոչ միայն սերունդներին է ավանդել տեղի ունեցած ապստամբության պատմությունը, այլև իր նպատակն է համարել դրվատել հայրենասիրությունը և անարգել դավաճանությունը, որի համար էլ այս երկը առանձնակի գեղարվեստականությամբ և հուզականությամբ է

գրված և հիմնված Վարդանի և Վասակի կերպարային հակադրութան վրա:

Եղիշեի շարադրանքի խոր հուզականութունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նա ոչ թե ուսումնասիրել, աղբյուրները քննել և հավաքել է փաստերը ու դրանց հիման վրա գրել իր պատմութունը, այլ որ Վարդանանց շարժման ժամանակակիցն ու մասնակիցն է եղել և Ավարայրի ականատեսը:

Այսպես, Եղիշեն շեշտելով, որ ինքը ոչ թե իրենից է հորինել և ոչ էլ լսածի հիման վրա գրել, ասում է. «...այլ ես ինքս անձամբ նույն տեղում պատահեցի և տեսա»: Հայոց աշխարհի փափկասուն կանանց մասին գրելուց էլ ասում է. «Իսկ երանելի առաքինիների և կապվածների ու պատերազմում ընկածների կանանցն ամբողջ Հայոց աշխարհում ես հաշվել չեմ կարող, որովհետև չիմացածներս ավելի շատ են, քան թե իմացածներս: Հինգ հարյուրի չափ անուն-անուն ճանաչում եմ, ո՛չ միայն նրանցից, ովքեր ավագագույններից էին, այլև շատերին՝ կրտսերագույններից» (էջ 403):

Ողջ միջնադարում Եղիշեի մատյանը եղել է պաշտամունքի առարկա՝ բազմիցս ընդօրինակվելով, իսկ 18-19-րդ դարերում այն ունեցել է ավելի քան երկու տասնյակ հրատարակություններ, սակայն 19-րդ դարի վերջերից սկսած՝ որոշակի թերահավատություն է ձևավորվել թե՛ պատմիչի և թե՛ նրա պատմության հանդեպ: Այս հանգամանքը պայմանավորված էր երկու պատճառով: Նախ, որ սկսած 19-րդ դարի կեսերից՝ գիտականորեն չհիմնավորված մի գերքննադատություն է ծավալվում, որի նպատակն էր հայ ժողովրդին զրկել իր մեծագույն հպարտություններից, և հատկապես Պատմահոր անմահ մատյանը մի անվավեր գործ համարելով՝ սուտ և կեղծ հռչակել Հայոց պատմությունը և, Ղևոնդ Ալիշանի գեղեցիկ բնորոշմամբ, հայ ժողովրդին զրկել իր պատմության վավերականության վկայականից, քանի որ Խորենացին է

հիմքը հայ պատմագրության<sup>22</sup>։

Եղիշեի պատմությունը ոչ ականատեսի կեղծիք հուշակելու գլխավոր երկու փաստարկներն այն էին, թե Փարպեցին, որ թվարկում է իր օգտագործած և իրեն հայտնի աղբյուրները, չի հիշում Եղիշեին, այնինչ, եթե նման պատմություն գոյություն ունենար, Փարպեցին չէր կարող չհիմանալ և չհիշատակել։ Հետևաբար, Եղիշեի գործը գոյություն չի ունեցել մինչև Փարպեցու պատմության գրությունը և դրանից հետո ու դրա հիման վրա է գրվել և հեղինակը իր գրածին առավել վավերականություն հաղորդելու համար իրեն ներկայացրել է որպես Վարդանանց ժամանակակից։ Այս փաստարկը հիմնված է երկու պատմիչների պատմությունների իրար հակադրելու անհաջող փորձերի վրա, իբրև թե Եղիշեն ավելի գեղարվեստական և վկայաբանական մի ներբողյան է գրել, իսկ Փարպեցին՝ մի ստուգապատում պատմություն։

Եղիշեի երկի վավերականությունը ժխտելու երկրորդ փաստարկը պայմանավորված էր Վասակի խաղացած դերի վերանայմամբ։ Նույն՝ 19-րդ դարի վերջերից պատմագրություն մեջ սկսեց արտահայտվել և այն տեսակետը, թե Վասակը ոչ թե դավաճան էր, այլ քաղաքական մի ուրիշ ուղղության ներկայացուցիչ, որի նպատակն էր երկիրը զերծ պահել արյունահեղությունից և ավերածությունից, իսկ Եղիշեն ու Փարպեցին, լինելով Մամիկոնյան տան պատմիչներ, միտումնավոր սևացրել են Վասակին։ Միաժամանակ, քանի որ Փարպեցու մոտ Վասակն ավելի բարդ և հակասական կերպար է, քան Եղիշեի մոտ, ըստ այդմ՝ Փարպեցին համարվեց առավել վավերական հեղինակ, որի պատմության հիման վրա Եղիշեն գրել է իր պատմությունը՝ լիովին սևացնելով Վասակին։

Եղիշե-Փարպեցի հարաբերակցությանը հանգամանալից անդրադարձել են մեր ականավոր հայագետներից Մանուկ

---

<sup>22</sup> Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք և Պատմութիւնք Հայոց, Ս. Ղազար, 1901, մասն Ա, էջ 55։

Աբեղյանը և Ստեփանոս Մալխասյանցը՝ մանրակրկիտ քննութամբ ցույց տալով, որ նախ Եղիշեն է գրել իր պատմությունը և ապա՝ Փարպեցին, և որ Եղիշեի հուզականությունը և շարադրանքի գեղարվեստականությունը պայմանավորված է Վարդանանց շարժման անմիջական ժամանակակիցն ու ականատեսը լինելով, որն իր կնիքն է դրել նրա մատյանի վրա:

Աբեղյանն այսպես է բնորոշում Եղիշեի Պատմությունը. «Եղիշեի մեծ երկի գեղեցիկ ձևից տարվելով՝ մեկն այդ անվանել է բանաստեղծություն, մի ուրիշը՝ վիպասանություն, մի երրորդն էլ՝ ներբողյան: Բայց դա ամենից առաջ պատմություն է, 5-րդ դարի մեծ ռազմական գործի՝ «Հայոց պատերազմի» պատմությունը, և Եղիշեն ինքը պատմիչ է: Իբրև այդպիսին, նա մեծ վարպետ է և իր գործին լուրջ վերաբերվող»<sup>23</sup>: Անդրադառնալով Եղիշեի պատմության զգացմունքայնությանը՝ Աբեղյանը գրում է. «Նա չի կարողանում սառն, հանգիստ շարադրել, կռվում է գրչով, շահագրգռված է իր պատմած դեպքերով, ինքը հուզվում է իր ազգի նեղյալ դրությամբ, ցավում է, տանջվում է դրա գիտակցությամբ, հիանում, հափշտակվում է նրա հերոսների սխրագործություններով, բարկանում, ատում է իր ժողովրդի տառապանքների դրդիչներին, ոգևորվում և աշխատում է նույն զգացումները հարուցանել ընթերցողի մեջ, որպեսզի նրանք էլ իր հետ գովեն կամ պարսպեն»<sup>24</sup>:

Եղիշեի հայրենասիրական ոգին Մալխասյանցը ոչ թե պատմական վավերականությունը կասկածի տակ առնող մի գործոն է դիտում, այլ հակառակը՝ այս մատյանի գլխավոր արժանիքը: Այն միտքը, որ Վարդանանց սերունդը ծնվեց 5-րդ դարասկզբի Սահակ-Մաշտոցյան Թարգմանչաց կրթամտավորական աննախադեպ շարժումից, նշանավոր հայագետը ձևակերպում է այսպես. «Գրերի գյուտը և ինքնուրույն

<sup>23</sup> Մ. Աբեղյան, Պատմություն հայ հին գրականության, Երկեր, հտ. Գ, Երևան, 1968, էջ 329-330:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 336:

գրականության սկիզբը դարագլուխ է կազմում Հայոց պատմութեան մեջ: Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների՝ թարգմանիչների բեղմնավոր գործունեութեան հետևանքով Հայ ազգը ինքնագիտակցութեան եկավ, ճանաչեց ու ջերմորեն սիրեց իր անցյալն ու Հայրենիքը: Թեև նա հետագայում կորցրեց իր պետական անկախութիւնը, բայց նրա մեջ մշտապես վառ մնաց ազատութեան ձգտումը և այն զգացումը, որ մարդու և ժողովրդի համար ամենաբարձր բարիքը ազատութիւնն է և ամենասիրելի բանը՝ Հայրենիքը, որի պաշտպանութեան համար չպետք է խնայել ոչինչ, նույնիսկ կյանքը: Հայրենիքի կարոտն ու սերը և խղճի ազատութեան ու քաղաքական ազատութեան տենչը այնուհետև անմար մնաց Հայ ազգի սրտում, և նա շատ անգամներ ոտքի ելավ այն ահավոր բռնակալների դեմ, որոնք պատմութեան ընթացքում փորձեցին շղթայել, կաշկանդել նրա ազատութիւնը: Հայոց պատմութիւնը այդպիսի Հայրենական պատերազմների, ապստամբութիւնների ու ըմբոստացումների մի շարան է, և այդ շարանի մեջ իր կարևորութեամբ ու նշանակութեամբ առաջնակարգ տեղ է գրավում «Վարդանանց» ապստամբութիւնը, որի պատմութիւնը գրել է Հայ ժողովրդի ամենասիրելի հեղինակներից մեկը՝ «Քաղցրազրուցիկ» Եղիշե վարդապետը»<sup>25</sup>:

Եղիշե-Փարպեցի հակադրութեան և այս երկու պատմիչների գործերը միմյանց ստորադասելու փոխարեն Մալխասյանցը նշում է, որ դրանք լրացնում են մեկը մյուսին և որ Եղիշեն գրել է Վարդանանց պատերազմի անմիջական տպավորութեան ներքո. «Եղիշեն դեպքերի դեռևս թարմ տպավորութեան տակ, վերքերը դեռ լիովին չսպիտացած՝ գրի է առել իր տեսածն ու լսածը, ինչ զարմանք, որ նրա երկից այնպիսի անմիջականութեան ու թարմութեան հոտ է բուրում, որ հարբեցնում է ընթերցողին, և որի հետ երբեք չի կարող հա-

<sup>25</sup> Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխտ. Ե. Տեր-Սիմասյանի, Երևան, 1947, էջ 7:

մեմատվել ժամանակ անցնելուց հետո սառնությամբ ամեն մանրամասնություն կշռադատած ու գրված որևէ քաղաքական պատմական երկ, ինչպիսին այս դեպքում Ղազար Փարպեցու գրվածքն է: Միամտության արդյունք է այս երկու հեղինակների երկերը իբրև պատմական գրվածքներ միմյանց հետ համեմատելը և մեկի առավելությունները մյուսի վերաբերմամբ ցույց տալը, որովհետև դրանք բոլորովին տարբեր բնույթի և տեսակի երկեր են, որոնց երբեք չի կարելի միևնույն չափանիշով մոտենալ: Ղազար Փարպեցու գրվածքն իսկական պատմություն է, որի նպատակն է պատմական եղելությունների ծագումն ու զարգացումը նկարագրել, իսկ Եղիշեի երկը, պատմական նյութ ունենալով հանդերձ, մի բանաստեղծություն է՝ լի քնարական ստաբուլիս գեղումներով, որի նպատակն է «սիրելիների համար մխիթարություն, հուսացողների համար հույս և քաջերի համար քաջակերություն լինել նեղ օրերում: Այն գրված է ցույց տալու համար, որ հայրենասիրությունը, ազատության սերը ոչ մի գոհաբերության առաջ կանգ չի առնի, ամեն նեղություն ու տառապանք կկրի հայրենիքի սիրո և խղճի ազատության համար»<sup>26</sup>:

Եղիշե-Փարպեցի հարաբերակցության՝ Մալխասյանցից եկող այս մոտեցումն առավել է խորացրել Հրանտ Թամրազյանը՝ նրբին դիտարկումներով ցույց տալով, որ Փարպեցին ծանոթ է եղել Եղիշեի մատյանին և առանց Եղիշեի անունը հիշատակելու՝ յուրօրինակ ներքին գրական մի վեճ մղել նրա հետ: Թամրազյանը ևս շեշտում է, որ երկու գործերի միջև եղած տարբերությունների հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Եղիշեն Ավարայրի ժամանակակիցն է եղել և այս ճակատամարտն ապրել և ընկալել է որպես կենաց մի գոտեմարտ հանուն հայոց գալիքի, իսկ Փարպեցին տասնամյակների հեռվից այն դիտել է հայոց պատմության ճակատամարտերի ընդհանուր շղթայում: Ինչպես նշանավոր գրականագետն է գրում եղիշեական շնչով. «Եղիշեն, հավատարիմ

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 14-15:



մնալով իր ժամանակի ոգուն, ձգտելով ընդգծել Ավարայրի ճակատամարտի քաղաքական ու հոգեբանական նշանակութ-  
յունը, հաճախ կանգ է առել փաստերի բանաստեղծական էություն վրա՝ օգնություն կանչելով նաև հույզերը, երևակա-  
յությունը, անգամ՝ չափազանցությունները: Նա եղել է ճա-  
կատամարտի մասնակից, զգացել է դավաճանների վատույթ-  
յունը և նահատակների կորստյան ցավը, գիտակցել է տառա-  
պանքի ու արյան բացառիկ նշանակությունը հայոց գալիքի համար: Իր տեսանկյունից պատմիչն իրավացի էր: Նրա ջեր-  
մաշունչ բանաստեղծական ոճը մինչև իսկ հետնորդ պատ-  
միչներին հոգեբանորեն լիովին հասկանալի էր. չէ՞ որ ապրել է կռվող մարդկանց մեջ, նրանց հետ եղել մտերիմ, հարա-  
զատ, տեսել է մարդկային սովորական բնավորությունների մեջ արթնացած գերմարդկային ճիգն ու վեհությունը՝ անձ-  
նուրացությունը, զգացել հայկական պետականության վե-  
րականգնման վերջին հույսերի կործանման սարսափը, որ չէր կարող պատմիչի մեջ ևս չարթնացնել հուզական անսո-  
վոր կուտակումներ ու խոհեր:

Ղազար Փարպեցին Ավարայրի մասին գրել է մոտ 40 տա-  
րի հետո: Տարիների հետ, բնականաբար, շատ բան էր փոխ-  
վել, հեռավոր ժամանակների կրքերը և մթնոլորտը այլևս չէին կարող հուզել արդեն հեռացած մարդկանց դրսևորած անսովոր ապրումներն ու խոհերը: Այս նոր պատմիչը, ապ-  
րելով Մամիկոնյանների մթնոլորտում, լսելով պատմածնե-  
րը, զրույցները, կարգալով իրեն՝ Եղիշեին, ուսումնասիրելով ճակատամարտի պատմությունը, Ավարայրը դիտել է ոչ իբրև միակ, այլ հայկական նորագույն պատմության բազմաթիվ դժվարագույն դրվագներից մեկը: Բնականաբար, նա ձգտել է լինել ստույգ, սթափ, ճշգրիտ, գրական օրենքներին և գի-  
տություն կանոններին հնազանդ, աշխատել է ոչինչ չավելաց-  
նել և ոչինչ չպակասեցնել, մի հանգամանք, որը ուղիղ գծով դեմ էր գնում Եղիշեի և այլոց խոսքի պատմականորեն ու հոգեբանորեն արդարացված չափազանցությունը»<sup>27</sup>:

<sup>27</sup> Հ. Թամրազյան, Հայ քննադատություն, Ա գիրք, Երևան, 1983, էջ 315-316:

Թամրազյանը, համեմատելով Ավարայրի ճակատամարտի՝ Եղիշեի և Փարպեցու նկարագրությունները, միանգամայն դիպուկ ձևով գրում է, որ «Փարպեցին, կարծես, խաղաղ սրտով փետրատել է արծվի թևերը»<sup>28</sup>: Շարունակվող այս զուգահեռներից հետո գրականագետը, որպես ընդհանրացում, ասում է. «Տարբեր ոճով են գրում երկու հեղինակները: Բայց երկուսն էլ արդարանում են պատմություն ասած, քանի որ, ներքին հակասություններով հանդերձ, երկուսն էլ իրենց ժամանակի քաղաքական, գրական ճաշակի ու պահանջների ծնունդն են»<sup>29</sup>:

Եղիշեին նվիրված գործերի շարքում Ավարայրի մատյանին բնորոշ շնչով առանձնանում է Արշակ Չոպանյանի՝ 1898թ. համիդյան ջարդերի ծանր տպավորությունները գրված «Հերոսները» հոդվածը: Այս վերնագիրն արդեն մի զուգահեռ է գծում Վարդանանց և 19-րդ դարավերջի հայ ֆիդայական շարժման միջև՝ մեկ անգամ ևս շեշտելով, որ Վարդանանք շարունակ կենդանիորեն ներկա են հայոց պատմության մեջ՝ լինի Ավարայրի դաշտում թե Սասնո լեռներում: Ծանր ու մղձավանջային այդ օրերին, երբ հայություն լինել-չլինելու հարցը հառնել էր արյունոտ մի հարցականի նման, Վարդանանց և Վարդանանց տոնի մասին հայ գրականության ճաշակավոր քննադատը գրում է. «Մեր մեծ տոնը, մեր հավիտենական տոնն է ան: Տոնը, որով ազգ մը իր հոգին կը փառաբանե, իր գոյությունը կը հաստատե: Վարդանը հայ ցեղին խորհրդանշական դեմքն է: Գաղափար անձնավորությունն է ան, ազգ մարդը: Ֆրանսիացիները ժան դ'Արքը ունին, մենք Վարդանը ունինք»<sup>30</sup>:

Բացարձակացնելով Վարդանի դերը հայոց պատմության ողջ ընթացքին՝ Չոպանյանը գրում է. «Հաղթական թագավորներ, իմաստուն վարիչներ, մեծագոր սուրբեր ունեցած

---

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 319:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 321:

<sup>30</sup> Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ, Երևան, 1982, էջ 323:

ենք, և սակայն ո՛չ մեկ անուն այնքան գուրգուրանքով ու պաշտումով տարածված է մեր մեջ, որքան Վարդանինը. դրոշակ անունն է ան: Մեր հին գրականության կենդանի գիրք ա՛յն է, ուր Վարդանին պատմությունը կերգվի: Մեր հին ու նոր բանաստեղծներուն ամենեն սիրական նյութը հրեղեն հեքիաթն է Ավարայրի կռվին: Ժողովուրդը իր անձնավորումը տեսած է այդ անվեհեր մարտիկին մեջ, որ մահվան դիմեց պահպանելու համար ազգային հավատքը, այսինքն՝ ազգային ինքնությունը»<sup>31</sup>:

Չոպանյանը, անդրադառնալով Վասակ-Վարդան հարաբերակցությանը, գրում է. «Մտածողներ եղած են, թե Վասակ մատնիչ մը չէր, այլ դիվանագետ մը, որ կ'ոլգեր հայրենիքը փրկել ոչ թե բուռն ու աղիտաբեր, այլ խորագետ ու հանդարտ միջոցներով: Բայց ժողովուրդը եղիչեին հավատացած է, Վարդանին հարած և անոր հետևած է: Ժողովուրդը միշտ խանդավառներուն կը հետևի. և իրավունք ունի: Խանդավառներն են, որ ազգի մը հոգին կը շինեն. նորեն անոնք են, որ անկման օրերուն, զանի կվերանորոգեն. անոնք ստեղծագործներն են. հանդարտ և խոհեմ մտքերը կը կազմակերպեն ու կը կատարելագործեն ինչ որ հանդուգն և անձնվեր հոգիները ուրվագծած են»<sup>32</sup>:

Ավարայրը հարկադրեց, որ Պարսից արքունիքը որոշակի զիջումների գնա, սակայն հալածանքները հայ նախարարների դեմ շարունակվում էին, թեև առավել թաքնված ձևերով, երբ խրախուսվում էր ուրացությունը, առաջ էին քաշվում դավաճաններն ու հայրենական ավանդներից հրաժարվածները, և այս ամենը հանգեցրին նրան, որ Ավարայրի տակավին բոցկլտացող հրդեհի կայծերից բռնկվի մի նոր ապստամբություն, և այդ նոր ապստամբությունը ուղղակիորեն դարձավ ոչ միայն Վարդանանց պատերազմի շարունակությունը, այլև տեղ-տեղ անգամ կրկնությունը:

---

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 325:

Շարժման առաջնորդն էր Վահան Մամիկոնյանը: Վահանը Վարդան Մամիկոնյանի Հմայակ եղբոր որդին էր: Հմայակը ևս գոհվեց Վարդանանց ապստամբության ժամանակ, իսկ նրա երկու որդիներին Վասակը, որպես պատանդներ, Պարսից արքունիք էր տարել: Նրանց Հազկերտը ազատում է Վրաց Աշուղա բղեղխի խնդրանքով: Նրանք իրենց մոր՝ Զվիկ իշխանուհու հետ ապրում են Աշուղայի տանը: Վահանը մեծանալով դառնում է Մամիկոնյան տան արժանի ժառանգը, վերահաստատվում իր տոհմական իրավունքներում: Պարսից իշխանության դեմ ապստամբել փորձելու կասկածանքով նա ևս կանչվում է Պարսից արքունիք: Վահանը թեև կարողանում է արդարանալ, սակայն նրան կասկածով են վերաբերվում, և այդ կասկածը միայն նրա անձով ու գործունեությունամբ չէր պայմանավորված, այլ Մամիկոնյան տոհմին պատկանելությունամբ: Փարպեցին վկայակոչում է Վահանի դեմ ուղղված մի չարախոսություն, որը մեկ անգամ ևս ցույց է տալիս, թե Մամիկոնյանները, որպես ազատության դրոշակակիրներ, ինչպես են ընկալվել ոչ միայն Հայաստանում, այլև Պարսից արքունիքում. «Արքունիքի մեծամեծներին, ինչպես նաև թագավորին փորձում են համոզել, թե անհնար է, որ սա Հայաստանում ապրի առանց ապստամբության: Արիներին մեկ առ մեկ հիշեցնում էին նաև նրա նախնիների գործերը, ասում էին՝ նրանցից ո՞րը չխռովեցրեց Արյաց աշխարհը և չպատճառեց մեծամեծ վնասներ ու մահեր: Արդ և սա, ասում էին, երբեք նույն խռովությունները կհրահարի ձեր դեմ» (Փրպ. էջ 283):

Վահանանց ապստամբությունը ևս սկսվեց սակավաթիվ ուժերով: Ինչպես Վարդանանք օգնություն ձեռք մեկնեցին Աղվանքին, այնպես էլ Վահան Մամիկոնյանը շտապեց Վրաստան՝ օգնություն: Հատկանշական է, որ ճակատամարտերից մեկը տեղի է ունենում հենց Արտազ գավառում, ուր և Ավարայրի ճակատամարտն էր եղել:

Թե՛ Վարդանանց և թե՛ Վահանանց ժամանակ անգամ Պարսից արքունիքում անարգվեցին ուրացողներն ու դավա-

ճանները, և հարգանքի ու պատվի արժանացան ուխտապահ ապստամբները:

Զինական քաջությունը զուգակցելով դիվանագիտական հմտությանը, ինչպես նաև օգտվելով այն հանգամանքից, որ հեփթաղներից կրած սոսկալի պարտությունից հետո, որի ժամանակ սպանվեց և Պրեոզ թագավորը, Պարսից արքունիքը փոխում է հպատակ ժողովուրդների դեմ վարվող քաղաքականությունը, նվարսակ բնակավայրում 484թ. կնքված հաշտության դաշնագրով վերահաստատվում են հայ նախարարների ու եկեղեցու ազատությունը, Վահան Մամիկոնյանը նախ դառնում է Հայաստանի սպարապետ, ապա և՛ մարզպան:

Վահանանց ապստամբության հաղթական ավարտը, զինական հաղթանակներից և ճիշտ դիվանագիտությունից բացի, պայմանավորված էր նաև երկու կարևոր հանգամանքով:

Առաջին՝ եթե Վարդանանց ժամանակ Հազկերտը կարողացավ անվտանգ դարձնել երկրի արտաքին սահմանները, ապա Պրեոզը սոսկալի պարտություն կրեց հեփթաղներից:

Երկրորդ՝ Վահանանց հաջողություններին գումարվեց և Ավարայրի վերհուշը՝ Պարսից արքունիքին բերելով այն եզրակացությունը, որ հնարավոր չէ ընկճել Հայաստանը և հարկավոր է գնալ փոխադարձ զիջումների, որոնց արդյունքում Հայաստանն ստացավ ներքին ինքնուրույնություն:

Վարդանանց ապստամբությունից ծնված Վահանանց դաշնադրությունը հայ պատմագիտություն մեջ իրավամբ ընկալվել է որպես զինական սկիզբ ունեցող և պայքարի վրա հիմնված դիվանագիտական հաղթանակ: Վարդանանց կողքին միշտ հաշվի է առնվել և այս հանգամանքը, երբ պատմության մեջ համանման իրավիճակներ են ստեղծվել:

Ինչպես ասացինք, Արշակ Զոպանյանն իր «Հերոսները» հոդվածը գրել է 1898թ. համիդյան ջարդերի ծանր օրերին: Վարդանանց պանծացումից հետո նա ևս չեչտում է, որ Վարդանով սկսվածը պետք է ավարտվի Վահանով, և այս հարցադրումը միայն տեսական, պատմագիտական դրույթ

չէր, այլ որոշակիորեն ունենար արդիական հնչեղութիւն: Այդ շրջանում Կ. Պոլսի Հայոց պատրիարքն էր համաժողովրդական սիրո արժանացած Մատթեոս Իզմիրլյանը, ով Հայոց Հայրիկից հետո 1908 թ. դառնալու էր Ամենայն Հայոց կաթողիկոս:

19-րդ դարավերջին նրան էր վիճակված համարձակորեն ընդվզել արյունոտ սուլթանի դեմ՝ պաշտպանելով երկրի հայութեան իրավունքները, որի համար սուլթան Համիդի հրամանով հեռացվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքական աթոռից, և պատրիարք է դառնում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, ով արդեն ձգտում է բուժել կոտորածների և ավերածութիւնների վերքերը: Իզմիրլյան՝ երկաթյա պատրիարք-Օրմանյան՝ դիվանագետ պատրիարք հերթագայութիւնը Զոպանյանը ներկայացնում է Վարդան-Վահան հաջորդայնութեամբ: Վահանանց հաջորդութիւնը խարսխելով Վարդանանց ապստամբութեան վրա՝ գրում է. «Վահան Մամիկոնյան, միանգամայն քաջ ռազմիկ և ճարտար դիվանագետ, կատարյալ տիպարն է ազգային վարիչի, բայց ժողովրդի հոգիին մեջ Վահանեն շատ վեր, ամենեն պայծառ լույսին մեջ, Վարդանին դեմքն է, որ կը կանգնի, որովհետև Վարդան մեռնիլ սորվեցուց: Եվ, կը կրկնեմ, ժողովուրդը իրավունք ունի: Առանց Վարդանյաններուն խիզախ շարժումին, միմիայն խորամանկութեան և ճարպիկ համակերպութեան վրա հիմնվելով, շատ հավանական է, որ Հայ ժողովրդին կորովը պիտի թուլնար, ինք իր վրա հավատքը պիտի նվազեր, և պարսկացումը, որ արդեն մասամբ սկսած էր Վարդանանց դեպքեն առաջ, պիտի ընդհանրանար: Վարդանանց արարքը թոթվեց ազգը, զանի վերանորոգեց, պարսիկ վիթխարի զորութեան դեմ այդ փոքրիկ խումբին անվեհեր հառաջ-խաղացութիւնը մեծ դասը տվալ ժողովրդին, թե անձնագոհութեան ոգին փրկարար ու ամրացուցիչ ուժն է, և թե անոնք սահմանված են ապրելու, որոնք իրենց իտեպիին համար մահ հանձն առնել զիտեն: Ժողովուրդը դասը հասկցալ: Շարժումը պատրաստ էր արդեն անոր հոգիին մեջ, Վարդա-

նանց արարքը կայծը եղավ. մեկ հարվածով ազգը ծայրե ի ծայր բռնկեցավ. և այն հոյակապ անսահման ցավագին դիմադրությունը սկսավ, գոր Եղիշե կը նկարագրե վսեմ էջերու մեջ»<sup>33</sup>:

Վահանի հաղթանակն անվանելով Վարդանանց գործի պսակումը՝ Չոպանյանը գրում է. «Եթե ժողովուրդը իր հիացման բաժանումին մեջ կողմնակալ է, պատմական քննություն անաչառ հայեցվածքին առջև՝ երկու հերոսները իրենց ճշմարիտ դիրքովն ու իրական համեմատություններովը կը ներկայանան: Առանց Վարդանին, հայ ժողովուրդը պիտի չի հասներ այն մեծաբորբոք խանդավառության, այն գերագույն գոհասիրության, այն խելահեղ հանդգնության, որոնց վրա հենվով Վահան կրցավ իր հնարագետ ծրագիրը հաջողցնել. բայց անշուշտ նաև առանց Վահանին ճարտար ու խորագետ քաղաքագիտությանը, Վարդանին հարուցած շարժումը պիտի հանգեր ջնջումի: Երկուքը իրար կը լրացնեն: Եվ մեր պատմությունը շատ անգամ կրկնած է այդ երկադրվագ դյուցազներգությունը»<sup>34</sup>:

Այսպիսով, Չոպանյանը Վասակ-Վարդան հակադրությունը փոխարինում է Վարդան-Վահան հերթագայությունը՝ էականորեն փոխելով հարցադրման բնույթը: Վասակ-Վարդան հարցադրումը հիմնված էր մի կողմից երկիրը ավերածությունից հեռու պահելու համար զգուշավոր խոհեմ քաղաքականություն վարելու գործելակերպի վրա և մյուս կողմից՝ վերջինիս հակադրվող անձնագոհ հերոսության վրա, որի արդյունքում, սակայն, ավերվում է երկիրը: Վարդան-Վահան հերթագայությունն այնինչ խորհրդանշում է, որ դիվանագիտական խելամտությունն իսկ պետք է հիմնված լինի անձնագոհ քաղություն վրա, որ եթե հակառակորդը չհամոզվի, որ ինքը բախվելու է Վարդանանց ինքնագոհողությունը, կարհամարհի դիմացինին և որևէ բանակցության ու զիջման չի գնա: Վարդանանց սլացքն է, որ պայմանավորելու է հա-

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 326:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 327:

Ջորդոզ բանակցությունների բնույթը և շրջանակը:

Պատմությունը վերստին կրկնվում է 572 թ., և ապստամբությունը գլխավորում է մի նոր Վարդան Մամիկոնյան: 560-ական թթ. Հայաստանի մարզպետ է նշանակվում Սուրեն Ճիհովր Վշնասպը: Նա, գալով մարզպանական կենտրոն Դվին, սկսում է հայահաված քաղաքականություն վարել, ապա հրամայում է ատրուշաններ կառուցել Հայաստանի պարսկական մասում և առաջին հերթին՝ Դվինում, որը, բնականաբար, չեն հանդուրժում հայ նախարարները, հոգևորականությունը և ողջ ժողովուրդը: Վիճակն առավել է սրվում, երբ նոր մարզպանը փորձում է ատրուշան կառուցել հենց կաթողիկոսանիստ կենտրոնում, որն այդ ժամանակ գտնվում էր Դվինում:

Հայ պատմիչներից բացի<sup>35</sup>, այս մասին գրում են օտար հեղինակները: Այսպես, վեցերորդ դարի ասորի մատենագիր Հովհան Եփեսացին ասում է. «Նա [Սուրեն մարզպանը] բռնի ատրուշանի տեղ նշանակեց, և սկսեցին հիմքը փորել և պատեր կառուցել, նույն ժամանակ ճակատամարտի համար նախապատրաստություններ տեսավ»: Վերջին այս խոսքերից կարելի է ենթադրել, որ նա կանխատեսել էր, թե հայերը չեն հանդուրժի նման մի արարք: Հովհան Եփեսացին այնուհետև ասում է. «Հայերը մեկ մարդու նման հավաքվեցին և գնացին մարզպանի մոտ... այնտեղ, որտեղ նա սկսել էր կրակի տաճարի կառուցումը, նրա հետ վիճելով ասացին. մենք քրիստոնյաներ ենք և արքայից արքայի հպատակներ, բայց հավատի հարցում մենք չենք ենթարկվի կամ լսի որևէ մեկին, եթե նույնիսկ ինքը՝ անձամբ թագավորը գա և մինչև որ մեզանից վերջինը չմահանա, հեթանոսական տաճար չի կառուցվելու մեր երկրում... Սակայն մարզպանը չլսեց նրանց և իրագործեց իր մտադրությունը, Դվինում կառու-

---

<sup>35</sup> Տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, աշխտ. Գ. Արգարյան, Երևան, 1979, էջ 68, Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 136-137, Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 59, Կիրակոսի Գանձակեցոյ Պատմութիւն Հայոց, աշխտ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 41:



ցեց սասանյան կրակի տաճար՝ «տուն մոգաց»<sup>36</sup>:

Ահա այս քայլն էլ պատճառ է դառնում ապստամբական մի նոր շարժման: Ապստամբութեան ընթացքում սպանվում է Սուրեն մարզպանը:

Այս ապստամբութեան մասին գրող ժամանակագրորեն ամենամոտ հայ հեղինակը յոթերորդ դարի պատմիչ Սեբեոսն է: Վերջինս հստակորեն տարբերակում է Ավարայրի Վարդան Մամիկոնյանին, նրան անվանելով Կարմիր Վարդան<sup>37</sup>, երկրորդ Վարդանից, որի մասին գրում է. «Վարդանն Մամիկոնից տէրն»<sup>38</sup>: Ըստ Սեբեոսի, այս Վարդան Մամիկոնյանը Մելիտինեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթել է այն զորաբանակին, որը անձամբ գլխավորել է Պարսից Խոսրով Ա Անուշըռվան արքան:

Երկրորդ Վարդանանց այս ապստամբությունը տեղի է վեց տարի<sup>39</sup> և գալիս է դարձյալ հավաստելու, որ հայ նախարարները միշտ պահել են երկրի ներքին ինքնուրույնությունը և թույլ չեն տվել անցնելու այն սահմանագիծը, որը կհանգեցնեք ստրկական վիճակի առաջ գալուն: Ինչպես նիկողայոս Ադոնցն է գրում. «Խորհուն գլուխը, իմացականությունը անհուսալի ուժ է առանց սրտի ներշնչումների: Գործնական ասպարեզում զգացական զեղումներն են մտքի իսկական թևն ու թափը: Մամիկոնյան հոսանքն էր պատրաստել այն սերմերը, որից բուսավ Բագրատունիների հունձը: Ազատասիրությունը ևս պետք ունի հոգածու ձեռքերի: Խիզախումների և բողոքի որոտումները որքան անհետևանք, այն նշանակություն ունին, որ չեն թողնում, որ ժողովրդի խոնարհությունն ու հլուծությունը հավասարվի ստրկություն»<sup>40</sup>:

---

<sup>36</sup> Հովհան Եփեսացի, Եկեղեցական Պատմություն, Ասորական աղբյուրներ, գիրք Ա, թրգմ. Հ. Մելքոնյան, Երևան, 1976, էջ 389:

<sup>37</sup> Պատմություն Սեբեոսի, էջ 65:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>39</sup> Տե՛ս Ն. Հակոբյան, 572թ. ապստամբության գնահատման հարցի շուրջ, «Ավարայրի խորհուրդը» գրքում, Երևան, 2003, էջ 214-220:

<sup>40</sup> Ն. Արոնց, Պատմագիտական ուսումնասիրություններ, էջ 45:

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք  
Ե Ի  
Հ Ա Յ Ո Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

Եվ ահա երբ մեր հայացքը ակամայից դեպի անցյալն է դառնում, գալիս կանգնում է մուկ հորիզոնի վրա Վանանդի Երեցը՝ յուր անմահ ընկերակիցների լուսադեմ խմբով մեկտեղ: Նա ինձ պատկերանում է ոչ այնպես, ինչպես պատկերացել է երբեմն բանաստեղծի երևակայության առաջ՝ երկնային չնաշխարհիկ մի երևույթ, վերև օդի մեջ, այլ իբրև մի հասարակ մարդ՝ ամուր հողի վրա կանգնած, մի պարզ գյուղական քահանա՝ խաչն ու Ավետարանը ձեռքին, մի տերտեր, այո՛, մեր այս... մեր այս ժԹ դարու լուսավոր սերնդի համար անչափ արհամարհելի տերտեր անունը կրող մի խեղճ մարդ, որի լեզվից սակայն մեղրի նման քաղցր խոսք է ծորում, որի հոգու պայծառությունը յուր պատկառելի դեմքի վրա է արտահայտվում: Անօրեն բռնակալներին անգամ պատկառանք ազդում, որի հետ ինքը Տէր Աստվածը խոսել է, Յուր սուրբ կարգի թարգման և վկա կարգել:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Ղևոնդյանք հայ եկեղեցականության պարծանք սուրբերն են. իրենց վրա կ'անձնավորվի հայրենիքի և հավատքի նվիրումին գաղափարը: Վարդանանց ընկեր և քաջալերող, ժողովուրդին կյանքին մեջ բարձր պահեցին կրոնքի սրբությունը և ամենեն ականավոր գործիչները եղան անոնք Հայ եկեղեցիով հայ ազգություն-

նը ապրեցնելու և պահպանելու սկզբունքին: Իրենց այդ ուղղութիւնի գաղտնիքը իրենց դաստիարակութիւնի մեջ պետք է տեսնել: Գրեթէ ամենքն ալ, բացի մեկէն, որ սակայն ամենուէն սիրուէին առարկա մնաց միշտ, աշակերտներն էին Սահակ-Մեսրոպյան դպրոցին, որ գիտցած էր անոնց մեջ զորացնել որչափ ուսման և զարգացումի՝ նուէնքան սրտի և նվիրումի մարդեր:

### ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԹ ԳՈՒՇԱԿՅԱՆ

Հայոց պատմութիւնի 4-5-րդ դարերի կարևորագույն իրադարձութիւններն են՝ Հայոց Դարձը, Գրեթի գլուտը և Ավարայրի ճակատամարտը, և երեքն էլ կատարվել են եկեղեցիպետութիւնը գործակցութեամբ՝ Տրդատ Մեծ-Գրիգոր Լուսավորիչ, Վռամշապուհ թագավոր-Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, Վարդանանք-Ղևոնդյանք: Ավարայրում հայ ուխտապահ նախարարները հավաքաբար Վարդանանք անվանվեցին, իսկ Ավարայրից հետո նահատակված հոգևորականները՝ Ղևոնդյանք:

Հանուն հավատի և հայրենիքի նահատակվածների հիշատակը Հայոց եկեղեցին սկսել է կատարել դեռևս Վրթանես քահանայապետի հայրապետութիւնի օրերից (կթղ. 333-341 թթ.): Փալատոս Բուզանդը գրում է, որ երբ իր զինակիցների հետ զոհվում է Հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանը, «Վրթանես մեծ քահանայապետը օրենք սահմանեց մեր աշխարհում տարեցտարի նրանց հիշատակը կատարել, ինչպես նաև նրանց, որոնք նույն կերպով աշխարհի փրկութիւնի համար ընկան»<sup>41</sup>:

Բուզանդի այս խոսքերից երևում է, որ Վրթանես հայրապետի սահմանած տոնը վերաբերվել է ոչ միայն Վաչե սպարապետին և նրա հետ զոհվածներին, այլև բոլոր նրանց, ով-

<sup>41</sup> Փալատոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 47:

քեր կրնկներն հանուն հայրենիքի պաշտպանության, և ինչպես գրում է Ռ. Վարդանյանը, սկզբնապես «Վարդանանց հիշատակի օրը տոնվեց Մակաբայեցվոց և Վաչեյանների հետ միասին, անշարժ տոնական օրով մինչև 8-րդ դարի 20-ական թվականները»<sup>42</sup>:

Տոնացույցի վերախմբագրումից և հիշյալ տոնից Վարդանանց օրվա առանձնացումից հետո այն դարձյալ Ավարայրի ճակատամարտի օրը՝ մայիսի 26-ին չնշվեց, որովհետև «Զատիկ-Պենտեկոստե հատվածում արգելվում էր սրբերի հիշատակի օրը կանոնելը ըստ ավանդության, որը վերագրվում է Հովհան Մանդակունի կաթողիկոսին»<sup>43</sup>: Վարդանանց տոնի այս նոր կարգավորման մասին Ռ. Վարդանյանը գրում է. «Հովհան Օձնեցին Վարդանանց հիշատակի օրը կանոնեց Բուն Բարեկենդանից առաջ ընկնող երեքշաբթի, այն է՝ Բուն Բարեկենդանի կիրակիից ետ հաշված 4-րդ օրը, և անշարժ տոնի օրը վերածվեց շարժականի»<sup>44</sup>: Հետագայում Բուն Բարեկենդանին նախորդող այս երեքշաբթի օրը սահմանվեց Ղևոնդյանց քահանայից տոնը, իսկ Վարդանանց տոնը սկսեց կատարվել Բուն Բարեկենդանին նախորդող Հինգշաբթի օրը: Տոնի ամբողջական անվանումն է՝ «Արբոց Վարդանանց գօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Վարդանանց հիշատակը Բուն Բարեկենդանին նախորդող Հինգշաբթի օրը կատարելը, տոմարական համապատասխան հաշվարկներով պայմանավորված կարգավորումից բացի, բացատրվում է և Վրթանես կաթողիկոսի հետևյալ խոսքերով. «Նրանք, որ իրենց կյանքը չխնայեցին այս բոլորի համար, նրանք պետք է պատվվեն Քրիստոսի վկաների հետ: Ուրեմն նրանց չլանք, այլ արժանապես պատվենք նահատակների հետ. մշտական կարգ սահմանենք ամբողջ մեր աշխարհում, որ ամեն ոք անխափան կատարե սրանց քաջության հիշատակը՝

<sup>42</sup> Ռ. Վարդանյան, Հայոց Տոնացույցը, Երևան, 1999, էջ 402:

<sup>43</sup> Նույն տեղում:

<sup>44</sup> Նույն տեղում:

*ինչպես Քրիստոսի նահատակների: Իսկ մենք տոն կատարենք և ուրախ լինենք, որ Աստված նրանցով մեզ հետ հաշտ լինի և այսուհետև խաղաղություն շնորհի»<sup>45</sup>:*

Վարդանանց տոնը Բուն Բարեկենդանին տոնելը բացատրվում է ուրախ լինելուն վերաբերվող այս կապակցությամբ, ինչպես որ Բարեկենդանն էր ուրախության մի օր Մեծի Պահոց տրտմալից շրջանից առաջ<sup>46</sup>:

Վարդանանց տոնը Մեծի Պահոց շրջանին նախորդող հինգշաբթի օրը տոնելը նաև հոգևոր մի այլ խորհուրդ ունի: Ինչպես գրում է Տ. Ղևոնդ քահանա Մայիլյանը, «Այդ օրերից հետո սկսվելու է Մեծ Պահքը՝ անձնաքննության և աղոթքի օրերը, երբ մեզանից ամեն մեկը պետք է քննի իր անցած ճանապարհը՝ հետագայում նույն սխալները չկրկնելու միտումով, հիշելու մեր հայրերի անցած ճանապարհը և նրանց հավատարիմ մնալու: Մեծի Պահոց օրերին ամեն մի անհատ պիտի վճռի, թե ո՞ւմ է պատկանում, ու՞մ վրա պիտի իր հույսը դնի, ո՞ր ճանապարհով պիտի գնա՝ Վասակի՞, թե՞ Վարդանի ու Ղևոնդի, այլ ճանապարհ չկա: Մեկը տանում է ստրկության ու մահվան, իսկ մյուսը՝ անհուսություն:

Մեծի Պահոց շրջանն էլ մի Ավարայր է ընդդեմ չար խավարի: Ահա այս խորհրդով էլ եկեղեցին իմաստուն ձևով կարգել է տոների այս հերթականությունը՝ մինչև Մեծ Պահքի սկսվելը, մեզ խրատելով Վարդանանց օրինակով, Ղևոնդյանների նվիրումով»<sup>47</sup>:

Յուրաքանչյուր եկեղեցական տոնի արարողություն ժամանակ Աստվածաշնչից եկեղեցում ընթերցվում են սուրբ-գրային հատկապես այն հատվածները, որոնք թեմատիկ մի ընդհանրություն ունեն տվյալ տոնի հոգևոր խորհրդի հետ: Համանման ձևով Վարդանանց տոնն սկսվում է Սողոմոնի

<sup>45</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 47:

<sup>46</sup> Այս մասին տես Լ. Ա. Մարգարյան, Գ. Ս. Միմոնյան, Ռ. Հ. Վարդանյան, Վարդանանց տոնի կանոնականացումը, Աստվածաբանական ֆակուլտետի տարեգրքի Բ գրքում, Երևան, 2007, էջ 24:

<sup>47</sup> Տ. Ղևոնդ քհն. Մայիլյան, Ոսկեփորիկ, Երևան, 1992, էջ 22:

Իմաստութեան գրքի երրորդ գլխի հետևյալ տողերի ընթերցմամբ, որոնցում շեշտվում է, որ նահատակների նահատակությունը զուր չանցավ.

**Բայց արդարների հոգիներն Աստծու ձեռքին են,  
Եվ մահը չի մոտենալու նրանց:  
Անզգամների աչքին թվաց, թե նրանք մեռան,  
Եվ նրանց ելքն այս աշխարհից համարվեց տանջանք,  
Իսկ նրանց հեռանալը մեզանից՝ կործանում:  
Բայց նրանք գտնվում են խաղաղութեան մեջ,  
Ու թեպետև մարդկանց թվում է, թե նրանք տանջվեցին,  
Բայց նրանք անմահութեան հաստատ հույս ունեն,  
Ինչպես և նրանք, որոնք չխուսափեցին  
սակավ ինչ տառապանքից,  
Պիտի բարիքներ գտնեն,  
Քանի որ Աստված փորձեց նրանց  
Եվ նրանց արժանի գտավ իրեն:  
Նրանց փորձեց, ինչպես ոսկին բովի մեջ,  
Եվ իբրև ողջակեզի զոհ ընդունեց նրանց:**

Տոների եկեղեցական արարողութեան ժամանակ երգվում են նաև տվյալ տոնին նվիրված շարականներ: Ղևոնդյանց տոնին նվիրված շարականները գրել են 11-րդ դարի նշանավոր մատենագիր և բանաստեղծ Հովհաննես Սարկավազ Իմաստասերը, ինչպես նաև Ներսես Շնորհալի հայրապետը (կթղ. 1166-1173 թթ.), իսկ Վարդանանց նվիրված շարականների հեղինակն է Շնորհալի հայրապետը: Յուրաքանչյուր տոնի ներքո հավաքված շարականների ամբողջությունը կոչվում է կանոն, և Հայոց եկեղեցու տոներին նվիրված շարականների գրքի՝ Շարակնոցի մեջ Ղևոնդյանց և Վարդանանց տոները ներկայացված են առանձին կանոններով:

Ղևոնդյանց նվիրված կանոնի առաջին շարականի առաջին տան մեջ ասվում է.

**Որ յառաջագոյն սահմանեցեր ըզփրկութիւն  
Հայաստանեայց,  
Շնորհելով մեզ հրաւիրակ զերանելին ըզՍուրբ Գրիգոր  
Օրհնեմք ըզքեզ ընդ զօրս անմարմնականացն՝  
Հայր ամենակարող՝<sup>48</sup> :**

Շարականագիրն այս խոսքերով դիմելով Աստծուն և նկատի ունենալով, որ առաջինը Հայ ժողովուրդն է պետականորեն ընդունել քրիստոնէությունը, ասում է, թե. Հայր ամենակալ, որ սկզբնապես փրկությունը սահմանեցիր Հայաստան աշխարհի համար և մեզ շնորհեցիր Քո հրավիրակին՝ պատգամաբերին, երանելի Սուրբ Գրիգորին, օրհնում ենք Քեզ հրեշտակների գորքերի հետ միասին:

Երկրորդ տան մեջ ասվում է, որ Աստված Իրեն խաչակից ընտրեց քահանայից դասին՝ նրանցից կարգելով, նշանակելով հովիվներ և վարդապետներ: Երրորդ տան մեջ, ուղղակիորեն նկատի ունենալով Ղևոնդյանց նահատակ քահանաներին, ասում է, որ Քո անվանը զինվորյալները, ովքեր պայծառացան իրենց թափած արյամբ, հաղթությամբ պսակվեցին:

Հաջորդ շարականում, դարձյալ նկատի ունենալով Ղևոնդյանց նահատակներին, ասվում է. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք»: Շեշտվում է, որ երկնային հրեշտակների համար ևս ցնծություն եղավ արյամբ զարդարվածների նահատակությունը:

Ինչպես Հայտնի է, պատարագը մատուցում են քահանաները: Քրիստոս, որպես բանական պատարագ, զոհ Իրեն մատուցեց աշխարհի փրկության համար: Ղևոնդյանց քահանաների՝ հանուն Հայոց աշխարհի նահատակությունը նման մի պատարագ ներկայացնելով և նկատի ունենալով նրանց նահատակությունը, այսինքն՝ պատարագվելը կրակապաշտների ձեռքով, ասում է, թե ամբարիշտների և ոչ մաքուրների ձեռքով նրանք որպես պատարագ մատուցվեցին աստվածային սեղանին:

<sup>48</sup> Չայնքաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 433:

Այս շարականում կա նաև ուղղակի արձագանքը Հայաստանում 11-12-րդ դարերում սելջուկյան արշավանքներից հետո ստեղծված ծանր վիճակի, երբ ավերվում էր Հայոց աշխարհը, իսկ ժողովուրդն էլ դիմում էր արտագաղթի, և ամայանում էր Հայաստան աշխարհը: Ինչպես շարականում է ասվում.

**Հեղմամբ արեան սրբոց Քոց հօտապետաց  
Ջեկեղեցույ Քո ցրուեալ մանկունս ժողովեա,  
Յուրախութիւն ըզվարատեալս տրտմութեամբ  
Եւ արտասուեաց յորդահոս բըղխմամբ,  
Փրկութեան մերոյ բաշխօղ:**

Այս տան մեջ, այսպիսով, շարականագիրը, դիմելով Աստծուն, ասում է, որ Քո սուրբ հայրապետների արյան հեղմամբ Քո եկեղեցու ցրված մանուկներին, այսինքն՝ աշխարհասփյուռ դարձող հայուկթյանը ժողովիր և նրանց տրտմությունը ուրախության փոխիր: Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, Անիի անկումից հետո Հայաստանում սպառնալի չափեր ընդունող արտագաղթի պայմաններում, մեր բանաստեղծությունը մեջ առաջինը հնչեցնում է Մայր երկրում ազգահավաքման կոչը:

Իր շեշտված հայրենասիրությամբ առանձնանում է հատկապես Ներսես Շնորհալու «Նորահրաչ պսակավոր» շարականը, որը ոչ միայն Վարդանանց տոնին եկեղեցում է երգվել, այլև հնչել է թե՛ որպես ռազմի երգ և թե՛ նոր շրջանում կատարվել ազգային-հասարակական տարբեր հավաքություններում: Ինչպես որ Եղիշեն է հիշում Վարդան Մամիկոնյանին և Ավարայրում նրա հետ ընկած նախարարներին՝ իրենց զինակիցների հետ, նույն ձևով էլ Շնորհալին է ոգեկոչում նրանց հիշատակը: Ծարականի առաջին տունը նվիրվում է Վարդան Մամիկոնյանին.



**Նորահրաչ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց,  
Վառեցար զինու Հոգւոյն՝ արիաբար ընդդէմ մահու,  
Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր ըզթշնամին,  
Վարդապոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի:**

Ալիտերացիայի՝ նմանաձայնութեան սկզբունքով Վարդանին նվիրված այս առաջին տան մեջ Շնորհալին ընտրել է հատկապես վ-ով սկսվող բառեր: Միաժամանակ, քանի որ Վարդան Մամիկոնյանը պատմութեան մեջ հայտնի է նաև Կարմիր Վարդան անվանմամբ, ուր Կարմիրը հավաքական խորհրդանիշն է Ավարայրի հերոսների թափած վառ արյան, Շնորհալին իր պատկերները կազմում է վառ-ով սկսվող բառերով:

Երկրորդ տունը նվիրված է Խորեն Խորխոռունուն, որը Ավարայրի ճակատամարտում եղել է հայոց երկրորդ գնդի հրամանատարը.

**Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,  
Խոհական իմաստութեամբ, խոհեմացեալ անճառապէս,  
Խորէն խորհրդական և ծանուցեալ անուն բարի,  
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ:**

Քանի որ այս երկրորդ տունը նվիրված էր Խորեն Խոռխոռունուն, ուստի այստեղ էլ նմանաձայնութեան նույն սկզբունքով ընտրված են խ-ով բառերը:

Երրորդ տունը նվիրված է Արտակ Պալունուն և ասվում է.

**Բենական լուսով լցեալ, արիացեալն քաջ Արտակ,  
Թաթաւեալ ի կարմրութիւն բոսորային բղխեալ աղբերն:**

Շնորհալու այս շարականը գրված է որպես ակորստիքոս, այսինքն՝ յուրաքանչյուր տան առաջին տողի առաջին բառի առաջին տառերի կապակցմամբ, որը հայ գրականութեան մեջ անվանվում է ծայրակապ, ստացվում է Ներսեսի երգ կա-

պակցությունը: Ահա այս պատճառով երրորդ տունը Շնորհալին սկսել է ինչ-որ տեղ արհեստական թվացող բենական բառով:

Անհրաժեշտ է նշել, որ բանաստեղծ կաթողիկոսը բանաստեղծական մեծ վարպետությամբ և ներշնչանքով կարողացել է թե՛ բանաստեղծության ծայրակապը պահել, թե՛ հիշվող նահատակների անվանը համահունչ նմանաձայնություն ստեղծել և թե՛ այս ամենը ներկայացնել բանաստեղծական հուզական և ներդաշնակ ձևի մեջ:

Հաջորդ՝ չորրորդ տունը նվիրված է Հմայակ Դիմաքսյանին, ուր այս նմանաձայնությունը արտահայտվում է Հմայակ հօր ընծայեալ, հոգևովն, հանդիսադրէն բառերով:

Համանման ձևով՝ Հաջորդ տունը նվիրված է Տաճատ Գնթունուն: Նա անվանվում է «Տաճատ զարմանալի»: Այս տան մեջ էլ տ-ի կիրառմամբ նրա նահատակությունը՝ երկինք փոխվելը, ներկայացվում է «տարագնաց ելիւք յերկինս» արտահայտությունով: Այս նմանաձայնությունը վառ է արտահայտվում նրան նվիրված տան հատկապես վերջին երկու տողերում:

**Տաճատ զարմանալի՝ տաճար եղեալ Երրորդութեանն,  
Տէրունեան սուրբ խորհրդոյն՝ տուն և տեղի  
արժանացեալ:**

Հաջորդ՝ Վահան Գնունուն նվիրված տան մեջ Վահան անունը ներկայացնում է սաղավարտ, պաշտպանիչ զրահ իմաստով՝ Ավարայրի այս նահատակին ներկայացնելով որպես հավատո և հայրենիքի պահպանության վահանի մի զրահը:

**Ստացեալ զհաւատոյ վահան յուսոյն զրահիւք ծածկեալ,  
Զփրկականն սաղաւարտ ի գլուխ եղեալ զնշան խաչին,  
Վահան վեհ երևեալ, որ մանկութեամբ նահատակեալ,  
Խաչելոյն վկայ եղեալ, պսակեցաւ արեամբն իւրով:**

*Յոթերորդ տունը նվիրված է Արսենին, ուր նա բնորոշվում է որպես «Արսէնն ցանկալի»:*

*Գարեգին Սրվանձտյանցին նվիրված տան մեջ ասվում է.*

***Երկոքումբք Հարազատովք ընտրելագոյն նահատակօք,  
Յառաջեալ յամենեցունց՝ գլուխ և աւարտ մարտիրոսաց,  
Նախաշաւիղ գոլով բարեաց՝ յառաջադէմն Գարեգին,  
Ընկալեալ զբարբիոնն յաղթանակ նահատակացն:***

*Նախավերջին տունը Հավաքական կերպով նվիրված է Ավարայրի բոլոր, ինչպես Եղիշեն է նշում՝ Հազար և երեսունվեց նահատակներին.*

***Րամկական խումբ Հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից,  
Որք ընդ նոսին նահատակեալ, արիաբար պատերազմաւ,  
Եւ Հեղին զարինս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ,  
Ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր Հանդիսադրէն:***

*Հայրենիքի Համար ընկած այն զինվորներին, ովքեր անվանապես չեն հիշվել, Շնորհալին Հավաքաբար անվանում է «րամկական խումբ», այսինքն՝ ժողովրդական գունդը, որի զինվորներն արիաբար նահատակվեցին իրենց իշխանների հետ՝ իրենց արյունը հեղելով եկեղեցու Համար և նահատակության պսակն ընդունելով երկնային Հանդիսադրից՝ երկնքից իրենց դիտողից՝ Աստծուց:*

*Այս շարականի վերջին տունը Սուրբ Երրորդությանն ուղղված մի փառաբանություն է, որում ասվում է, թե «եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»՝ իրենց բարեխոս ունենալով Վարդանանց սուրբ նահատակներին:*

*Հայ միջնադարյան բանաստեղծության մի ուրույն տեսակն են գանձերը: Ի տարբերություն շարականների, նրանք թեև մաս չեն կազմել եկեղեցական տոների արարողությունների կանոնի, սակայն դարձյալ ասվել են եկեղեցում:*

Առաջին գանձերը գրել է Գրիգոր Նարեկացին: Նա ևս, այս ստեղծագործությունների տների սկզբնատառերով ցանկանալով կազմել իր Գրիգոր անվան ծայրակապը, չափածո այս ստեղծագործություններից մի քանիսը սկսել է «գանձ» բառով, որը հետագայում ընդհանրանալով դարձել է երգվող այս բանաստեղծությունների ընդհանուր անվանումը: Շարականների նման, գանձերը ևս գրվել են եկեղեցական բոլոր տոների համար, ըստ այսմ և Գանձարան ժողովածուում գանձերի առանձին կանոններ են նվիրված նաև Վարդանանց ու Ղևոնդյանց: Եկեղեցական տոների գանձարանային կանոնը կազմված էր այդ տոնին նվիրված գանձից, տաղից, փոխից, ինչպես նաև մեղեդիից կամ հորդորակից: Ղևոնդյանց ու Վարդանանց տոները ևս ունեն իրենց գանձարանային կանոնները, որոնք դարերի ընթացքում հարստացել են գանձարանային կանոնի մաս կազմող տարբեր միավորներով:

Ղևոնդյանց նվիրված գանձում նրանք բնորոշվում են այսպես.

**Ղևոնդեանց քահանայութիւն, առաքինասէրք  
յաղթաւղք ի մարտի:**

Ղուկասի ավետարանի «Մի՛ երկնչիր, հոտ փոքրիկ» և Պատմահոր նշանավոր հայոց փոքր ածուխի հետևողությամբ՝ շարականագիր Մովսես վարդապետն ասում է, թե դուք քարոզեցիք «հաւտիս այս փոքու», այսինքն՝ հայ ժողովրդին՝ նրանց հորդորելով «ի մարտ մաքառման», որով և բարի հիշատակ թողեցին «որպէս գքաջք արիք ի մարտի»<sup>49</sup>:

Մեկ այլ՝ «Գանձ Ղևոնդեանց եւ Սրբոց Վարդանանց» գործում, որի վերնագրում իսկ շեշտվում է, Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց միասնությունը, ասվում է, որ Ավարայրից առաջ հայոց զորքը

**Չոգան ի դաշտն Արտաղ գաւառի, ուր էր**

---

<sup>49</sup> Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 7785, քերթ 121բ:

**տապանն թաղէոսի,  
Աստուածառաք սուրբ աշակերտի եւ Հրաշագեղ  
կուսին Սանդխտի,  
Երկրպագեն Սրբոյն Գեղարդի, որ մխեցաւ  
ի կողն Յիսուսի<sup>50</sup> :**

Ինչպես Հայտնի է, Համաձայն Հայ մատենագրութեան, թաղեոս առաքյալը, գալով Հայաստան, Եղեսիայում նախ բժշկում է Աբգար թագավորին՝ իր հետ ունենալով Փրկչի կողը խոցած Աստվածամուկ Սուրբ Գեղարդը, ապա անցնում է Արտազ գավառ, ուր գտնվում էր Սանատրուկ թագավորը: Թաղեոս առաքյալի վկայաբանութիւնում ասվում է, որ առաքյալի՝ Արտազում քարոզութեան ընթացքում շատերն են քրիստոնյա դառնում, այդ թվում և Սանատրուկի Սանդուխտ դուստրը, և երբ Սանդուխտը չի լսում հորը՝ ետ դառնալու քրիստոնեութիւնից, գայրացած Սանատրուկը նախ նահատակում է Սանդուխտին, ապա և՛ առաքյալին:

Արտազում Սանդուխտի և Թաղեոսի նահատակութեան վայրում է կառուցված Թաղեոս առաքյալին նվիրված Թաղեի վանքը:

Վարդանանց մասին գրող պատմիչներից որևէ մեկի մոտ որևէ հիշատակութիւն չկա, թե Վարդանանք ուխտի եկած լինեն Թաղեի վանք, որը հինգերորդ դարում դեռևս պետք է լիներ առաքյալի նահատակութիւնից հետո այստեղ կառուցված մատուռը, թեև բացառված չէ, որ Վարդանանք կամ Հայոց բանակից մի խումբ գորականներ այցելեին նվիրական այս վայրը՝ Հայցելու առաքյալի և սրբուհի կուսի բարեխոսութիւնը:

Հատկանշական է, սակայն, որ այս գանձում ասվում է, թե Վարդանանք այստեղ երկրպագել են նաև Ս. Գեղարդին: Պատմական աղբյուրներն այս մասին ևս ոչինչ չեն հաղորդում: Ինչպես Հայտնի է, 13-րդ դարի կեսից Ս. Գեղարդը

---

<sup>50</sup> Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 8251, քերթ 114բ:

սկսում է պահվել Պռոշյանների տոհմական տիրույթ դարձած Այրիվանքում, որը կարճ ժամանակ անց, ի պատիվ Ս. Գեղարզի, սկսում է անվանվել Գեղարզավանք, և նույն այս շրջանում է, որ պատրաստվում է Ս. Գեղարզի նշանավոր պահարանը:

Մատենագրական աղբյուրները նաև բավական քիչ տեղեկություններ են հաղորդում, թե մինչև Այրիվանքը որտեղ է պահվել Ս. Գեղարզը: Հնարավոր է, որ առաքյալի նահատակությունից հետո այն պահված լինի Արտազում: Թաղեի վանքում անգամ 14-րդ դարում գրված հիշատակարաններում հիշվում է Ս. Գեղարզի՝ այստեղ պահվելու մասին: Այսպես, 1315 թ. Թաղեի վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում ասվում է, որ այն գրվել է «ի սուրբ և յերկնահանգէտ, ի հռչակաւոր ուխտս, ի յաթոռս և ի հանգիստ սուրբ առաքելոյս Թաղէոսի, ընդ հովանեաւ ամենազաւր Աջոյն Յիսուսի, առ ոտս Սուրբ Աստուածային արեամբ ներկեալ նշանիս՝ Սուրբ Գեղարզեանս և սուրբ կուսին Սանդխտոյ»<sup>51</sup>:

Այս հիշատակարանում փաստորեն ասվում է, որ Թաղեի վանքում է պահվում Ս. Գեղարզը: Հիշատակարանի այս խոսքերից, սակայն, կարելի է նաև հասկանալ, որ Ս. Գեղարզը ոչ թե այդ ժամանակ ևս այնտեղ է պահվել, այլ որ հիշյալ ձեռագիրը գրվել է նրա հովանու ներքո, ինչպես որ գեղարզը հիշելուց առաջ գրիչը ասում է Հիսուսի ամենազոր Աջի ներքո: Ուստի այս հիշատակարանից կարելի է նաև ենթադրել, որ ժամանակին այստեղ պահված Ս. Գեղարզը հովանի է այդտեղ գրվող ձեռագրին: Հնարավոր է նաև մեկ այլ տարբերակ: Ինչպես հայտնի է, կային լեզվական կայուն կաղապարներ, որոնք ձևավորվում էին մի տեղական ժամանակի ընթացքում և կիրառվում դարձյալ մի տեղական ժամանակ: Լեզվական նման կաղապարները, որոնցով բնորոշվում էր ձեռագրի գրության համար տեղի ծառայած այս կամ այն

---

<sup>51</sup> ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 114:

վանքը, բառացիորեն համընկնում են տասնամյակների ընթացքում գրված մի շարք ձեռագրերում, ասես դրանք ոչ միայն նույն գրիչը գրած լինի, այլև մի ձեռագրի համապատասխան հատվածը արտագրած լինի նույն վայրում գրված մեկ այլ ձեռագրից: Ուստի կարելի է ենթադրել, որ Թադեի վանքի սրբությունները թվարկող լեզվական այս կաղապարը ստեղծվել է այն ժամանակ, երբ Ս. Գեղարդը պահվել է այստեղ, ապա շարունակել փոխանցվել ընդօրինակությունից ընդօրինակություն Ս. Գեղարդի՝ Այրիվանք տարվելուց հետո ևս:

Թադեի վանքում 1330 թ. գրված մի Ավետարանի հիշատակարանում դարձյալ հիշվում է Ս. Գեղարդը: Այս հիշատակարանում ասվում է, որ այն գրվել է «ի գաւառս, որ կոչի Արտազ, ընդ հովանեաւ Սուրբ առաքելոյս Թադէոսի և աստուածամուխ Սուրբ Գեղարդեանս»<sup>52</sup>: Այս հիշատակարանից ևս կարելի է եզրակացնել, որ ոչ թե այդ ժամանակ այդտեղ է պահվել Ս. Գեղարդը, այլ ժամանակին այդտեղ պահված Ս. Գեղարդը դարձել է վանքի հովանավոր զորություններից մեկը:

Վասն հավատո և վասն հայրենյաց գիտակցված նահատակության ընթացող Վարդանանք, ուստի, բացառված չէ, որ ուխտի գային Ավարայրի շրջագծում գտնվող՝ նահատակության գաղափարն իրենում խտացնող այս սրբավայրը, և որ հիշյալ գանձի հեղինակը մատենագրական մեզ ոչ հայտնի որևէ աղբյուրից կամ Արտազում պատմվող ավանդություններից վերցնելը այս տեղեկությունը:

Սուրբ Գեղարդին նվիրված մեկ այլ գանձում, որի հեղինակն է Առաքել Բաղիչեցին, ասվում է, որ Ս. Գեղարդը Թադեոս առաքյալի նահատակությունից հետո այդտեղ է պահվել, և Գրիգոր Լուսավորիչը հետո այն տարել է Այրիվանք:

**Նոյն եւ զԳեղարդն Սուրբ տիրական, զմածեալն  
արեամբ լուսոյն հայրական,**

<sup>52</sup> Նույն տեղում:

**Առեալ Գրիգոր զնշանն յաղթութեան,  
զգործին մահու և կենդանութեան,  
Ջէն Արարչին մերոյ փրկական, զազատութիւն  
տանս աղամական,  
Տարեալ յԱյրիվանքն հրաշագան ու եկեղեցի  
շինեաց պատուական<sup>53</sup>։**

*Ս. Գեղարդը հիշվում է նաև Վարդանանց նվիրված մի տաղում ևս, որում ասվում է.*

**Ի գաւառն Արտաղու խումբ առեալ, զօրութեամբ  
Գեղարդին քաջացեալ,  
Ըզվրան Սուրբ Սարգսին յօրինեալ, սուրբ մարմնոյ  
և արեան հաղորդեալ<sup>54</sup>։**

*Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ միայն Ս. Գեղարդն է հիշվում, այլև ասվում է, որ Վարդանանք Ս. Սարգսին նվիրված խորան են կանգնեցրել: Ս. Սարգսի վկայաբանությունից գիտենք, որ նա նահատակվել է Պարսկաստանում և մասունքները բերվել են Հայաստան: Այսպիսով, Վարդանանց նվիրված այս գործերում նշվում է, որ դեպ Արտաղ՝ դեպ Ավարայրի դաշտ ընթացող հայոց բանակը մինչև ճակատամարտը հոգևոր մի հաղորդության մեջ է մտնում Արտաղի հետ հարաբերվող սրբությունների հետ:*

*Գանձերը եթե ներկայացնում են տվյալ տոնի պատմությունը, ապա տաղերը, որ ծավալով անհամեմատ փոքր ստեղծագործություններ են, արդեն հուզական վերաբերմունք են արտահայտում գանձում պատմված իրադարձության մասին՝ ըստ այդմ ունենալով առավել հուզական և գեղարվեստական շունչ: Ղևոնդյանց և Վարդանանց նվիրված գանձարանային*

<sup>53</sup> Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 427, քերթ 297բ:

<sup>54</sup> Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 6495, քերթ 174բ:



կանոններից նման բնորոշ օրինակ է ստորև ներկայացվող տաղը.

*Մաքուր հոգով, արիք մարմնով,  
Լերո՛ւք ողբակից հայոց հաւատով,  
Լացէ՛ք սգով, անդադար երգով,  
Ալէլուայ, ալէլուայ:*

*Աստղ աննըման, սպարապետին  
Սըրբոյն Վարդանա քաջ նահատակին,  
Գըլուխ կացեալ մեծի հանդիսին,  
Ալէլուա, ալէլուայ:*

*Թորգոմածին վրկայն Գարէգին,  
Զատագով եղեալ խաչեալ արքային,  
Մեռաւ փուխով եւ եհաս Փըրկչին,  
Ալէլուա, ալէլուայ:*

*է իմ ասել վասըն ուամին,  
Զոր գունդքըն հայոց քաջ գոլ պատմեցին,  
Խորէն, Վահան, Արտակ, Հըմայակ,  
Ալէլուա, ալէլուա:*

*Ողբամ զկորուստ հասեալ աշխարհիս Հայոց,  
Գերեալ զպարծանք ազգիս զհարքըն հաւատոյս,  
Քահանայիւք հանդիսիւ ուխտոյս,  
Ալէլուա, ալէլուա:*

*Սուբըն Յովսէփ, զհայրն Իսահակ,  
ԶՂեւոնդ վարդապետ կապեալ քարշեալ յատենի,  
Խորտակեցին և գլխատեցին,  
Ալէլուա, ալէլուայ<sup>55</sup> :*

---

<sup>55</sup> Երևանի Մատենադարան, ձեռ. հմբ. 8251, քերթ 117բ-118ա:

Ավարայրի ճակատամարտի՝ Եղիշեի նշանավոր նկարագրության հետևողությամբ գանձերում ևս գտնում ենք Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը, ինչպես օրինակ՝ Վարդանանց գանձի կանոնի միավոր եղող այս տաղի հետևյալ հատվածում.

**Ձանգիտեալ յոյժ պարսից արքային, զխորութիւն  
այն Տրդմուտ մեծ գետին:  
Գունդք հայոց փոյթ ի գետն հասին, և մըտեալ  
ի ջուրն անկանէին,  
Ձիարչաւ հարձակմամբ խաղային, անողորմ  
ըզիրեարս խոցէին:  
Երկոքին կողմքն անդէն զինէին, սրտմըտեալ  
բարկութեամբ խաղային,  
Քան ըզգագանս ընդ իրեար խառնէին, և նիզակ  
և սուսեր փայլէին:  
Ի ճօճել նիզակացն ահագին հրաձգութիւնք  
ի յերկիր եռային,  
Եւ լինէր անդ տագնապ ահագին, և վատուժքըն  
սըրտիւ ճըմլէին:  
Եւ ճայթմունք աղեղանց և լարին մեծ հընչմունք  
որոտմանց լինէին,  
Ջքարանձաւըս լերանց շարժէին, զգաշտըն մեծ  
դողացուցանէին,  
Խառնեցան ընդ միմեանս երկոքին և լախտաւք  
զմիմեանըս հարին<sup>56</sup>:**

---

<sup>56</sup> Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 6495, քերթ 175բ-176ա:

**Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք  
Ե Վ  
Հ Ա Յ Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը**

**Խավարը լուսի պակասությունն է:**

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ**

Վարդանանց տոնը լինելով հայ ժողովրդի ազգային-եկեղեցական ամենաաիրված տոներից մեկը, միաժամանակ առաջին հերթին հենց երիտասարդության տոնն է և այդպես էլ ընկալվել է դարերի ընթացքում թե՛ եկեղեցու շրջագծում և թե՛ ժողովրդական տոնակատարություններում և հասարակական հանդիսություններում:

Եկեղեցական տոներին ոչ միայն շարականներ են երգվել և գանձեր ասվել, այլև բեմից քարոզներ են խոսվել:

Սկսած միջնադարից մեր Եկեղեցու նշանավոր վարդապետների խոսած այս քարոզները կամ գրի են առնվել և կամ էլ իրենք այդ քարոզների գրավոր տարբերակները դասավորելով ըստ եկեղեցական Տոնացույցի ընթացքի, կազմել են տարեկան տոների քարոզների շարք, որոնք հայ ձեռագրային ավանդույթով անվանվել են Քարոզգրքեր:

Քարոզգրքերի այս շարքում իր տարածվածութամբ առանձնանում է հատկապես Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը, որը կազմված է «Ձմեռան» և «Ամառան» հատորներից, ըստ տոների տարեկան ընթացքի, որոնցից առաջին հատորն ընդգրկում է Տարեմտից և Ս. Ծննդից մինչև Հոգեգալուստ ընկած տոները, իսկ երկրորդը Վարդավառից մինչև դեկտեմբերի վերջը կատարվող Ավագ տոները:

Վարդանանց տոնը քանի որ կատարվում է Բուն Բարեկենդանին նախորդող Հինգշաբթի օրը, ուստի Տաթևացու Վարդանանց նվիրված քարոզները գտնվում են «Ձմեռան» հատորում<sup>57</sup>:

Տաթևացին իր երկհատոր այս քարոզաչարում բոլորից շատ՝ վեց քարոզ, նվիրել է Վարդանանց ու Ղևոնդյանց: Ցանկանալով առավել շեշտել այս տոնի հատկապես երիտասարդներին վերաբերվելը, հիշյալ վեց քարոզներից երեքի խորագրում ասվում է որ դրանք նվիրված են երիտասարդներին և Սրբոց Վարդանանց: Այս քարոզներից մեկը, որը խորագրված է «Վասն երիտասարդաց քարոզ, որ և Սրբոց Վարդանանց պատշաճի», որպես բնաբան ունի ժողովողի գրքի հետևյալ տողերը. «Ուրախացիր երիտասարդ քո երիտասարդությամբ. թող սիրտդ քեզ զվարճացնի քո երիտասարդ օրերին» (գլուխ ԺԱ 9): Հաջորդ քարոզն էլ խորագրված է «Վասն մանկանց երիտասարդաց և Սրբոց Վարդանանց», որի համար ևս որպես բնաբան ընտրված տողերը կապվում են երիտասարդության հետ. «Հիշիր քո Արարչին քո երիտասարդության օրերին, քանի դեռ չեն եկել դառնության օրերը, և չեն հասել այն տարիները, որոնց մասին պիտի ասես. «Կյանքից այլևս հաճույք չեմ գգում»» (գլուխ ԺԲ 1):

Երիտասարդներին և Վարդանանց նվիրված քարոզների այս շարքը սկսվում է «Վասն իմաստութեան լուսոյ և գործոց, որ և Սրբոց Վարդանանց պատշաճի» քարոզով, որի բնաբանը նույնպես ընտրված է ժողովողի գրքից. «Իմաստունի աչքերն իր գլխին են, իսկ անմիտը գնում է խավարի միջով» (գլուխ Բ 14):

Տաթևացին քարոզի սկզբում նշում է, որ Սողոմոնը իմաստությունը լույս է անվանում ասելով, թե իմաստությունը առավել է անմտությունից այնպես, ինչպես լույսը խավարից:

---

<sup>57</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 187-222:

Տաթևացիին հոգևոր-իմանալի լույսի երկու տեսակ է մատնանշում

ա) Իմաստության լույսը

բ) Բարի գործերի՝ բարեգործության լույսը:

Իմաստությունը լույս և խավարը անմտությունն է անվանում հետևյալ պատճառներով: Նախ որ խավարը լույսի պակասությունն է և ինչպես լույսն է փարատում խավարը, այնպես էլ իմաստությունը անիմաստությունը: Տեսանելի լույսով պայծառանում է աչքը և իմանալի՝ մտավոր լույսով միտքը:

Լույսով երևում է ճանապարհի ընթացքը և այդ ճանապարհին եղած խորխորատներն ու որոգայթները և իմաստությունն էլ ցույց է տալիս օրինավոր և ճշմարիտ ճանապարհը:

Լույսով երևում են բարեկամների և հակառակորդների դեմքերը և իմաստությամբ՝ չարն ու բարին, հրեշտակայինն ու սատանայականը:

Լույսը ուրախացնում է և խավարը տրտմեցնում:

Ինչպես որ լույսով են ճանապարհ գնում, այնպես և իմաստությամբ պետք է գործեն:

Ինչպես լույսն է թափանցում և անցնում ջրի և ապակու միջով, այնպես էլ իմաստությամբ մտովի տարբեր արգելքներ ենք հաղթահարում:

Նույնը վերաբերվում է և բարության լույսին: Ինչպես որ լույսով են երևում բարեկամներն ու թշնամիները, այնպես էլ մարդիկ են զանազանվում իրենց բարի և չար գործերով:

Լույսը հանգստացնում է աչքերը և բարությունը մարդկային հոգին:

Լույսը ցրում է խավարը և բարեգործությունը մեղքերը:

Ինչպես որ լույսը առավել լավ է թափանցում պարզ օդով և ջրով, այնպես էլ մարդը առաքինության բարի գործերով փայլում է, երբ իր հոգուց ցրում է մեղքի թանձրությունը:

Լույսը կարող է լինել արեգակի, լուսնի, կանթեղի, սահայն որտեղից էլ որ այն բխի լուսավորում է: Նույն ձևով

էլ տարբեր կարող են լինել բարի և առաքինի գործերը, նրանք սակայն բոլորն էլ Հոգին են զարդարում և պայծառացնում:

Լույսի թե՛ աննյութական և թե՛ մասնիկավոր լինելը Տաթևացին հետևյալ ձևով է բացատրում. Լույսի բխումը աննյութական է, իսկ աչքով տեսնելը՝ նյութական: Ինչպես ինքն է գրում «Զլոյսն անմարմին մարմին ասեն, զի ըստ որում յանկարծակի ծագէ, անմարմին է և ըստ որում զգայութեամբ տեսանի՝ մարմին է»:

Նույնը վերաբերվում է և բարի գործերին: Բարեգործությունը նյութապես, մարմնաբար ենք կատարում, սակայն այն մեր Հոգին է զարդարում:

Լույսը ստվերով է ծածկվում և բարի գործերը խափանվում, դադարում են կյանքում գործած մեղքերով:

Լույսի և խավարի այս քննությունից հետո, որով Տաթևացին խորհրդանշական կերպով նկատի ունի Վարդանանց և ուրացողներին, ասում է, թե ահա այսպես փայլեցին Վարդանանք, իսկ ուրացողները մնացին խավարի մեջ:

Տաթևացին այնուհետև անցնելով ժողովողի «Իմաստունի աչքը իր գլխին է» խոսքերի բացատրությունը ասում է, որ կենդանի բոլոր արարածների աչքը, որով տեսնում են աշխարհը, գլխի վրա է, որովհետև գլուխը մարմնի պատվականագույն և կարևորագույն մասն է, ուր «բնաւորեալ են»՝ գտնվում են հինգ զգայությունները, որոնցով մարդը տեսնում է և լսում է, հոտոտում և ճաշակում և շոշափում, իսկ մարմնի մյուս անդամները ունեն միայն «շոշափական զգայութիւն»:

Երկրորդ քարոզի համար որպես բնաբան դարձյալ բերված են ժողովողի նույն խոսքերը: Առաջին քարոզում բացատրելով գլխի պատվականագույն լինելը մարմնի մյուս մասերից, այս քարոզում ժողովողի հիշյալ խոսքերը Տաթևացին արդեն կապում է Վարդանանց խորհրդի հետ: Գլուխ և մարմին հարաբերակցությունը համեմատելով տիրոջ և ծառայի հետ, ասում է, թե ինչպես թագավորը իշխանների իշխանն է, և իշխանները տերերն ու կառավարողներն են իրենց իշխա-

նության ներքո եղողների, այնպես էլ զորավարները գլուխը և իշխանն են իրենց զորքերի, ինչպես, որ «Սուրբ Վարդան Մամիկոնեան ի վերա զօրացն Հայոց, որք հրամանաւ նորին նահատակեցան և պսակեցան ի Քրիստոսէ»:

Նրանք ովքեր իմաստուն են, իրենց իշխանին լսում են, իսկ ովքեր անմիտ են, ապստամբում են և դեպ խավարն են գնում, ինչպես որ «ուրացողն Վասակ՝ ապստամբեալ ի զօրավարէն Հայոց ի մեծէն Վարդանայ, աստ չարաչար մահուամբ մարմնով սատակեցաւ ի Պարսս և անդ զանէծս և գյաւիտենից տանջանս ընկալաւ ի Տեառնէ»: Այսպիսով ըստ Տաթևացու Վարդան Մամիկոնյանը լինելով Հայոց զորքերի հրամանատարը՝ սպարապետը, գլուխն էր Հայոց զորքի՝ մարմնի, և Վասակը չենթարկվելով նրան և անջատվելով մարմնի ընդհանուր հյուսվածքից չարաչար մահվամբ սատակեց, ենթարկվելով հավիտենական անեծքի և տանջանքի:

Տաթևացին այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե արդյոք պետք է հնազադ լինել բոլոր իշխաններին, թե՛ չար և թե՛ բարի, և որ չար իշխանների կամքը կատարելով արդյոք մենք ևս կամակից չենք դառնա նրանց չար գործերին:

Այս հարցադրումը Տաթևացին ուղղակիորեն կապելով Վարդանանց Հազկերտին չհնազանդվելու հետ, ասում է, որ անգամ չար իշխանին պետք է հնազանդ լինել, բացառությամբ երկու դեպքի. առաջին, եթե իշխանը պարտադրում է հավատից շեղվել և երկրորդ, եթե նա պարտադրում է, որ դիմացինը ևս չարության գործերով ընթանա:

Տաթևացին բերում է հետևյալ օրինակը. երբ իշխանի հրամանով մահապատժի են ենթարկում մահապարտին, սպանողը, դահիճը անպարտ է մնում թափած արյունից, որի համար պատասխանատվութունը կրում է մահվան վճիռ տվողը: Սակայն անմեղ մարդու մահապատժի դեպքում սպանվողի հանդեպ արենապարտ է դառնում ոչ միայն իշխանը, այլև այդ սպանութունը իրականացնողը:

Վարդանանց նվիրված Հաջորդ՝ «Ուրախ եղիր երիտասարդ» բնաբանով քարոզում էլ Տաթևացին ասում է, որ ու-

րախուծթյան ընդունակ հասակը երիտասարդությունն է, որովհետև ի տարբերությունն երեխաների, երիտասարդները արդեն լիովին ձևավորված են, ինչպես նաև տարեցների նման ծերացած չեն և որ երիտասարդների «զգայարանքն առողջ և ուժ ի հասակն»:

Երիտասարդն է, որ կարող է վայելել կյանքը, որի համար էլ ուրախ է համարվում: Երիտասարդության բարձրագույն մի արտահայտությունն է համարում Վարդանանց, նրանց համար գրելով. «Վասն սրբոց նահատակացն և զօրավարացն Հայոց, մեծին Վարդանայ և ընկերաց նորա, որք ոչ միայն երիտասարդք էին և արի մարմնով, այլև հոգևով»: Վարդանանց համար ասում է, որ նրանք մահն հանձն առան և մեռան մարմնով և կենդանացան հոգով, բարի անուն և հիշատակ մեզ թողեցին և հավիտենական կյանքին արժանացան:

«Վասն մանկանց երիտասարդաց և Սրբոց Վարդանանց», քարոզում էլ Տաթևացին տալիս է նահատակի հետևյալ սահմանումը. «Զմարտիրոսն խոստովանող կոչեմք, որք բանիւ և գործով խոստովանեցան զՔրիստոս և հեղին զարիւն իւրեանց վասն անուան Նորա, որպէս Սուրբն Վարդան և ընկերք նորա: Նոյնպէս յորժամ յիշեմք զՔրիստոս և խոստովանիմք ի միտս և ի լեզուս, մարտիրոսացն լինիմք պսակակիցք»: Այսիքն՝ մարտիրոսները՝ նահատակները նրանք են, ովքեր իրենց գործով և խոսքով խոստովանեցին Քրիստոսին և իրենց արյունը հեղեցին հանուն Նրա անվան, ինչպես որ Սուրբ Վարդանը և իր ընկերները: Տաթևացին շեշտում է, որ նահատակներին պսակակից կարող ենք լինել ոչ միայն նահատակութեամբ, այլև երբ հիշում ենք Քրիստոսին և Տիրոջը խոստովանում մտքով և խոսքով՝ լեզվով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ զինվորները հիմնականում երիտասարդ և պատանի են լինում, Վարդանանց համար ասում է, որ նրանք թեև «մանուկ էին հասակաւ, այլ ծեր իմաստութեամբ, որ զմահ ի յանձն առին և անանց պսակացն արժանաւորեցան»:

Ղևոնդյանց և Ատոմյանց նվիրված քարոզի համար Տա-



Թեև ցիին բնաբան է ընտրել Առակաց գրքի «Իմաստությունը փառաբանվում է ճանապարհների վրա» (Ա 20) խոսքերը: Ասում է, որ արդարները այն ժամանակ են ուրախ լինում, երբ Տիրոջ ճանապարհով են ընթանում, մեկը ճգնությամբ մարմինն է չարչարում, մեկ ուրիշը աղոթքին տրվում և ումանք էլ նահատակվում են հանուն Քրիստոսի անվան, ինչպես որ Ղևոնդյան քահանաները և Ատոմյան զորավարները, որոնք հայոց այրուծիի հրամանատարներն էին և մինչ Վարդանանց ապստամբությունը նահատակվեցին, գտնվելով Պարսից բանակում և հրաժարվելով ուրանալ քրիստոնեությունը: Այս համատեքստում «Իմաստությունը փառաբանվում է ճանապարհներին» խոսքի համար ասում է, թե այսպես նահատակներն են համարձակապես ընդունում նահատակության պսակը:

Տաթևացիին առանձին մի քարոզ էլ նվիրել է Վասակին և նրան հետևողներին, այդ քարոզը խորագրելով այսպես. «Քարոզ վասն մեղաւորաց, հերձուածողաց և ուրացողաց Վասակայ և այլոց» և այս քարոզի համար բնաբան է ընտրել ուղիղ ճանապարհը թողնողներին և խավարի ճանապարհով ընթացողներին վերաբերվող խոսքերը «Առակաց գրքի» երկրորդ գլխից:

Վարդանանց տոնը երիտասարդության հետ է կապվում նաև այդ օրը կազմակերպվող ժողովրդական հանդիսություններով: Նախորդելով Բարեկենդանին և Վրթանես քահանայապետի սահմանմամբ՝ լինելով ուրախության տոն և ոչ թե սգո՝ այն կապվել է Բարեկենդանի շաբաթվա ժողովրդական արարողությունների հետ և հայտնի է Բարեկենդանի հինգշաբթի անվամբ: Բարեկենդանի շաբաթվա ուրախությունների ու տոնախմբությունների շարքում այն առանձնանում է իր շեշտված ազգային ու ռազմահայրենասիրական բնույթով:

Վարդանանց օրվա շրջանակում ազգային-հոգևոր մի նոր վերաիմաստավորման է ենթարկվել ննջեցյալների հիշատակը ոգեկոչելու սովորույթը՝ վերածվելով Վարդանանց հիշատա-

կի ոգեկոչման: Վահան վարդապետ Տեր-Մինասյանն այն անվանում է «Վարդանանց այգուց»՝ գրելով. «Այգուցն է Հին, շատ Հին սովորութիւն: Այգուցն է պաշտօնական սուգ, որ թէեւ ցարդ գաւառներու մէջ կը կատարուի, այլ ոչ այժմ մեծ քաղաքներու մէջ: Ի Հնումն սգոյ օրերն էին նուիրական, բոլոր Հին ազգերն ունեցած են իրենց սգոյ օրերը, այսինքն՝ Այգուցը: Քրիստոնէութիւնն այդ Հին աւանդութիւն՝ սգոյ օրերն ոչ թէ չմերժեց, այլ եւ ընդունեց, թող որ Տէր Յիսուս իսկ Այգուցի մասնակցեցաւ՝ երթալով յատկապէս ի Բեթանիա եւ լալով իր բարեկամ Ղազարոսի գերեզմանին վրայ»<sup>58</sup>:

Վարդանանց այգուցի նրա նկարագրությունը պարզ գրառում է, այլ ասես վերջինիս վրա Հիմնված գեղարվեստական մի պատառիկ, գունեղ կտավի մի ծվեն, որում Վարդանանց նվիրված ստեղծագործությունների հետևողությամբ գերիշխում են կարմիրն ու վառը. «Բայց ահա ձայներ կը լսուին, սագերու, քեմանչէներու անուշիկ գեղգեղ նուագներ, եւ դէս ու դէն պարաւորներ կան, որոց դահն ու թմբուկ կը գոռգոռան եւ կ'ողջունեն Բարեկենդանը, եւ սէրը՝ սրտերու թինդ ու խինդ սէրը կ'երգուի ու կը յեղյեղուի: Կարմիր է արեւը, կարմիր են աշուղներս, կարմիր պղպջուն կարմրուկ կթխէներն լեփլի են կարմիր գինիով: Իմիններուն աշուկները բոցավառ են. իմիններուս այտերը վառ ի վառ վարդ են, կարմիր են շրթներն իմիններուն եւ այդ շրթներէն կը թափթփին, ցանուցիր կ'սփռուին հազար-վարդին հազարումէկ թերթիկներն, ի ծիլ ու ի ծաղիկ թերթիկներ, թոյր ու բոյր սփռող, սիրոյ թոյր ու բոյր ցանող գունազեղ թերթիկներ:

Հոն են եւ ի նժոյգ աշտանակած Միհրանիկներս ու Վահաններս ու զիրար կը շնորհաւորեն ճօճելով ճոկանն ճապուկ ճախր ի ճակատն ճերմակ ճաճանչուն, ըստ Հին խաղերու եւ խաղքերու: Գարեգինիս ու Տիրանիկիս դէմ դիմուկն են Վարսենիկս ու Վարդենիկս. կարմիր հալաւ են հագած, պսպղուն

<sup>58</sup> Վահան վրդ. Տեր-Մինասյան, Անգիր դպրութիւն, հտ. Բ, Կ. Պոլիս, 1904, էջ 58:

վալայ են կապած, Հիւսկէն կիտուկիտ գօտին ի մէջք, Հինա-  
յոտ մատիկներով տմփիկը կը չխչխկեն եւ մերթ ընդ մերթ  
կը դափեն պարելով շորորը»<sup>59</sup>:

Այդ օրը կազմակերպվող խաղերով և թատերականացված  
միջոցառումներով այն դարձել է նաև օտար բռնակալության  
դեմ ժողովրդի ընդվզման մի արտահայտութիւն, որը լավա-  
գույնս երևում է այդ օրվա ազգագրական նկարագրութիւն-  
ներից, որոնց Հիման վրա ազգագրագետ Հրանուշ Խառատյա-  
նը գրում է. «Մեծահասակների ներկայացումների սյուսե-  
ներն, անշուշտ, ավելի բարդ էին: Նախ, Բարեկենդանի օրե-  
րին եկեղեցին նշում էր Ավարայրի ճակատամարտի հերոս  
Վարդան զորավարի տոնը, և այդ օրերին Հայոց տարբեր ազ-  
գագավառներում հաճախ էին ներկայացնում Ավարայրի ճա-  
կատամարտի որևէ դրվագ: Խումբը, օրինակ, բաժանվում էր  
հայերի և պարսիկների: Ձիուն բազմած Վարդան զորավարը  
խրախուսող ելույթ էր ունենում, հավաքում իր զորքը և ար-  
շավում մյուս ծայրից եկող զինված պարսիկների վրա: Փայ-  
տե սրերով խաղացվում է ճակատամարտի տեսարան, որտեղ  
հայերը հաղթում են: Հաջորդ դրվագում պարսիկների դերա-  
կատարները խեղճ են, դրանք քրքրված հագուստով, երեսները  
սևացրած գերիներ են, որոնց վրա քարեր են շարտում,  
հայհոյում են, քաշքշում:

Ավարայրի ճակատամարտի հիշատակը մինչև 19-րդ դարի  
վերջը Բարեկենդանի հինգշաբթի օրը խաղերի կամ արարո-  
ղութիւնների ձևով պահպանվել է Մոկսում, Վասպուրական-  
ում, Շատախում, Ռշտունիքում, Կարինում, Շիրակում և  
այլ գավառներում: Դրանք կոչվել են տարբեր կերպ՝ Վար-  
դան Մամիկոնյանի ցուցք կամ ցուցմունք, Վարդան Մամի-  
կոնյանի ծես, Վարդանանց պատերազմ, Ավարայրի ճակատա-  
մարտ: Ըստ 1909 թ.-ին Վասպուրականում տեղի ունեցած  
ցուցքի, ժողովրդի մեջ մշակված է եղել գործողութիւնների  
որոշակի ծրագիր: Նախապես հայտարարվել է ցուցքի կազ-

---

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 61-62:

մակերպման մասին: Հրավիրվել են նախ բոլոր երիտասարդ տղամարդիկ: Յուրաքանչյուր տեղի է ունեցել Իշխան գյուղում՝ գյուղապետի, վարժապետի, սրբազան հոր և ավագների խորհրդի ղեկավարի գլխավորութայամբ: Կատարվել է դերաբաշխում՝ Վարդանի, Ղևոնդ Երեցի, Վասակի, նախարարների դերեր, հայ ու պարսիկ զինվորներ: Որոշ մարդիկ, տարիներ շարունակ այդ դերերը կատարելով, ունեցել են համապատասխան հագուստ: Պատրաստվել են դրոշակներ, զինանշաններ, վահաններ, գլխազարդեր և այլն: Դերեր են ստանձնել նաև ողբասաց կանայք: Ներկայացում-պատերազմը սկսվել է երթով՝ դեպի եկեղեցի. երթը գլխավորել է Ղևոնդ Երեցը, որի աջ կողմից քայլել է Վարդանը, ձախից՝ Վասակը, նրանց ետևից՝ զինվորները, ապա՝ պատվավոր քաղաքացիները, արհեստավորները՝ իրենց դրոշներով ու նշաններով: Երթը ուղեկցվել է գուռնա-դհոլով, նվագել են ռազմական քայլերգեր կամ պարեղանակներ: 1909 թ. Իշխան գյուղում ցույցքն ունեցել է ճակատամարտի ձև. հայ և պարսիկ զինվորները սկսել են կռվել և նույնիսկ այնքան են տաքացել, որ նրանց բաժանել են որոշ դժվարություններ: Այնուհետև խաղի մեջ են մտել ողբասաց կանայք, որոնք կատարել են որոշ թաղման ծեսեր:

Արդյունքում այս ամենն ավարտվել է պարերով, որոնց մասնակիցները, սակայն, դարձյալ միայն տղամարդիկ էին: Ընդ որում երբեմն այս պարերը գլխավորել են պարագլուխ են կանգնել կամ հոգևորականները, կամ Ղևոնդ Երեցի դերակատարը: Այս ծիսական պարերին հաջորդել են մրցախաղերը՝ ձիարշավը, մականախաղերը... Ավելի ուշ Վարդանանց պատերազմի հիշատակման արարողությունն սկսեցին կազմակերպել դպրոցները, որտեղ այն վեր ածվեց միջոցառման, որի ընթացքում արտասանում էին, երգում և միջոցառումն ավարտում բեմի վրա կատարվող թատերական ներկայացումով»<sup>60</sup>:

Պարսկաստանի Ղարադաղ գավառում կատարվող Վարդանանց տոնի նկարագրության մեջ ասվում է. «Ղարադաղում

<sup>60</sup> Հ. Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոներ, Երևան, 2005, էջ 84-85:

Վարդանանց տոնը 1900-ական թվականներից սկսած «ավելի ազգային բնույթ էր ստացել, քան կրոնական»: Պատարագից հետո ազատ հրապարակում դպրոցական աշակերտության մասնակցությամբ ներկայացվում էր պատերազմի տեսարանը: Աշակերտները բաժանվում էին երկու բանակի: Հայկական բանակը իր մասնակիցների գլխարկների ամրացնում էր խաչեր, իսկ պարսկականը՝ արևի նշան, և սկսվում էր կռիվը՝ փայտե սրերով: Կռվում Վարդան զորավարն սպանվում էր, բայց հայկական զորքը իր սպարապետի վրեժն առնելու համար հարձակվում ու «ոչնչացնում» էր պարսկական բանակը»<sup>61</sup>:

Ղրիմում և Նոր Նախիջևանում էլ Վարդանանց տոնն այսպես է կատարվել. «Անկախ նրանից, թե ինչ չափով ներկայացման մասնակցողները տեղյակ էին պատմական անցյալին, «Քաջ Վարդանանց տոնը» հայտնի էր ժողովրդին:

Ներկայացման մասնակցողներն իրենց խմբում պիտի ունենային մի զորավար՝ երբեմն ձիու վրա նստած, երբեմն էլ առանց ձիու, մի երեց՝ քահանայի հագուստով, մի քանի հայ մարտիկներ և մի քանի զինվորականներ, որ պարսից զորքը պիտի ներկայացնեին:

Զգեստավորման տեսակետից «Վարդանանց պատերազմը» խաղացող խմբերը պատմական անցյալի հեռավոր պատկերը ներկայացնելու համար ճարում էին հագուստ, ուկվիզիտ: Զորավարը, որ Վարդան Մամիկոնյանը պիտի ներկայացներ, զգեստավորվում էր թատրոնի պահեստից վերցրած զգեստներով: Կարող էր պատահել, որ զորավարի զգեստը զանազան դարաշրջանի, ժողովուրդների, գործիչների տարազը ներկայացնող տարբեր մասերից լիներ: Ամենաէականը, սակայն, այն էր, որ զորավարի դերը կատարող երիտասարդը լիներ թիկնեզ, կրեր «պատմական» հագուստ, ձեռքին՝ սուր, գլխին՝ սաղավարտ, և լավ կլիներ, եթե ձի ունենար:

Ղևոնդ Երեցի դերը կատարող երիտասարդի հարցը շատ հեշտությամբ էր լուծվում. քահանայի կամ սարկավազի ֆա-

---

<sup>61</sup> Հայ ժողովրդական խաղեր, հտ. Ա, աշխտ. Վ. Բրոյանի, Երևան, 1963, էջ 69:

րաջա և գլխին որևէ փափուկ կտորից կարած գլխարկ, սպիտակ ներկած խաչը ձեռքին: Փայտից շինած խաչի հարցը լուծվում էր առանց դժվարության:

Հայ զինվորների զգեստավորման հարցն էլ առանձին դժվարություն չէր պատճառում ներկայացում կազմակերպողներին: Նրանք նման էին խաչակիր զինվորների. զգեստները գլխավորապես վերցնում էին թատրոնից»<sup>62</sup>:

Բարեկենդանի հինգշաբթիի՝ այսինքն՝ Վարդանանց տոնի կատարումը ննջեցյալների հիշատակի ոգեկոչում է հիշեցնում նաև Երվանդ Շահազիզի նկարագրությունը. «Սարգիս Բզնունին, նկարագրելով Բարեկենդանի հինգշաբթի օրը, Վարդանանց զորավարների տոնին Աշտարակում կատարված ուրախությունները, ի միջի այլոց, այդ մասին էլ ասում է. «Հետո (այսինքն՝ գերեզմաններն օրհնելուց, գերեզմանաքարերի վերա բաց արած սեղանները վայելելուց և Հայոց ազգի ու Աշտարակա ննջեցելոցը հիշելուց հետո-Եր. Շ.) գնում էին Սուրբ Մարիանե եկեղեցվո բակը: Այդտեղ նորից գյուղի անվանի մարդիկը, այսինքն՝ ամեն ազգիցը (ընտանիքից, տանից-Եր. Շ.), որը հարուստ ու առաջադեմն էր... շատ մարդիկ, մինչև հարյուր հոգի, կարգով նստում էին և ուրախություն անում մինչև երեկոյան ժամի ժամանակը, <երբ> յուրաքանչյուրի տանից ճոխ սեղան պատրաստված՝ ուղարկվում էր նրանց համար: Այսպես նահապետական կյանքով միշտ ուրախություն էր անում Բարեկենդանի՝ Վարդանանց տոնի հինգշաբթի օրը Աշտարակն ամեն տարի»<sup>63</sup>:

Վանի Ս. Վարդան եկեղեցում Վարդանանց տոնի կատարման մասին Շերենցը գրում է. «Ս. Վարդանի եկեղեցվո տոնախմբությունը կատարվում է այն հայտնի օրը՝ Բարեկենդանի հինգշաբթի, բայց թե ինչ հոգեկան պատրաստությամբ և ինչ հոծ բազմությամբ արանց և կանանց, դպրոցական ներկայացուցիչների, ես չեմ կարող լիուլի պատմել»<sup>64</sup>:

<sup>62</sup> Ա. Արշարունի, Հայ ժողովրդական քատերախաղեր, Երևան, 1961, էջ 70-71:

<sup>63</sup> Ե. Շահազիզ, Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 237-238:

<sup>64</sup> Շերենց, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 26:

Այս տոնը առավել շեշտված ազգային-հայրենասիրական երանգավորմամբ է ներկայացվել հատկապես քաղաքային միջավայրում՝ Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերից հետո ուղղակիորեն դառնալով ազգային-ազատագրական պայքարի մի կոչ, և այն այդպես է հնչել նաև Կ. Պոլսում:

Արևմտահայ ու հատկապես պոլսահայ գրականության հմուտ գիտակ Գառնիկ Ստեփանյանը ժամանակի մամուլից երկու թղթակցություն է բերում, որոնք ցույց են տալիս, թե այս տոնը ազատագրական պայքարի ինչ խոր ենթատեքստ էր ձեռք բերել: «Քանի որ ազգային զգացումներ սկսան զարթնուլ, Վարդանանց օրը Կ. Պոլսո ժողովրդի պաշտելի օրը եղած է: Ժողովուրդը խուռն բազմությամբ դպրոցներ կլեցնու, երգեր, ճառախոսություններ կլինեն, թեպետ ոչ մեծ արդյունք, բայց և այնպես, ոգևորություն մը կը տիրե, քարոզիչները ինքզինքնին Ղևոնդի ժառանգ կը համարեն նույն օրը, ժողովուրդն ալ բնականորեն Ավարայրի դյուցազանց թոռները կը կարծեն ինքզինքը, պահ մը 5-րդ դարը կվերանանք», գրում է Արփիար Արփիարյանը<sup>65</sup>:

Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում 1881 թ. կատարված Վարդանանց տոնի մասին Արփիարյանը գրում է, որ ժողովուրդը և հատկապես գավառներից եկածները «թեպետ եկեղեցի և դպրոցներ ունին, բայց Վարդանը այլ կերպ տոնել կուզին, քան իրենց հանդարտ եղբայրները: Ոստիկանական պաշտոնական տան դիմաց ունին մեծ զբոսավայր մը՝ հայկական անվամբ: Շուտ մը սրճարանին ճակատը կը դնեն Վարդանի պատկերը, կը զարդարեն դափնիներով, և հոծ բազմություն մը կսկսի երգել ու ծափահարել: Ոստիկանությունը կը վազե կուգա, բայց ժողովուրդը կը դիմադրե, ռուսիացի հայ մը ժողովրդի թարգմանը կըլլա, առ ոստիկանությունն. «Մենք մեր կրոնը այս պատկերի (Վարդանա) պարտական ենք, 1000 տարիեն ավելի է, որ այս սուրբը կտո-

<sup>65</sup> Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հտ. Բ, Երևան, 1969, էջ 299, տե՛ս և «Մշակ», Թիֆլիս, 1881, հմ. 33:

նենք, ըրեք ինչ որ կուզեք, բայց չենք կարող մեր սուրբ պարտականությունը չկատարել»: Ժողովուրդը միաձայն «Այո», «Այո» կը գոչե, և խեղճ թուրք պաշտոնյան շփոթած՝ տեղը կը դառնա: Կ. Պոլսո մեկ ծայրեն մյուս ծայրը հայոց արյունը սկսավ քիչ մը շրջան ընել»<sup>66</sup>:

Վարդանանց՝ եկեղեցու բեմից դեպ ժողովրդական թատերախաղերը, ապա և քաղաքային միջավայրում թատրոնի բեմը ելնելը նկատի ունենալով՝ Հ. Հովհաննիսյանը Վարդան Մամիկոնյանին անվանում է «հայ թատրոնի սուրբը», գրելով. «Հայ նոր թատրոնն ստեղծվել է որպես խորան և զոհասեղան: Այստեղ է տեսլականացել հայրենիքի գաղափարը և այստեղ է եկել վերստին անմահանալու Ավարայրի մեծ նահատակը»<sup>67</sup>: Շարունակելով խոսքը՝ ասում է, որ հայ թատրոնին «ներշնչում էր հաղորդելու Սուրբ Վարդանի խորախորհուրդ ստվերը: Այդ ստվերը միշտ կանգնած է եղել անցյալի հայ դերասանի թիկունքում: Հայ դերասանը սրբազան ներշնչանքով է կրել նրա պայմանական սաղավարտն ու սուրը և ամեն անգամ բեմ է մտել խաչակնքելով և խաչանշան սուրը համբուրելով»<sup>68</sup>:

Նկատի ունենալով Վարդանանց տոնի վերը հիշված արարողութայինները՝ հայ թատրոնի տեսաբանը գրում է. «Ժողովրդի լայն խավերը, հատկապես գավառում, թատրոնը պատկերացրել են ոչ այլ կերպ, եթե ոչ պատմություն, կորցրած փառքերի ու հոգևոր սխրանքների կենդանի հուշ՝ մարմնավորված Ավարայրի մեծ նահատակի կերպարով»<sup>69</sup>:

Թե ինչով էր պայմանավորված այս ֆենոմենը, Հ. Հովհաննիսյանը այսպես է բացատրում. «Վարդանի կերպարով ստեղծվել է մի թատրոն թատրոնից վեր, գեղարվեստորեն պարզունակ, որպես ազգային երազ «ոչ տեսանելի, այլ իմա-

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 300-301, տե՛ս և «Մշակ», 1881, թիվ 38:

<sup>67</sup> Հ. Հովհաննիսյան, Հայ թատրոնի սուրբը, «Ավարայրի խորհուրդ» գրքում, Երևան, 2003, էջ 177:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 178:



նալի գորություն»», ինչպես բնութագրվել է Հայոց պատարագը 5-րդ դարում: Բոլոր ազգերի թատրոններն ունեցել են նման հերոսներ՝ Սիդ, Վիլհելմ Թելլ, Դմիտրի Դոնսկոյ և այլն, բայց նրանցից ոչ մեկը չի վերածել կրոնական գաղափարի: Այդպիսին է դարձել միայն մեր Մեծ նահատակը, քանզի մեր ժողովուրդը միշտ սպասել է նրա հարուժյանը ոչ որպես բեմական, այլ կենսական իրողության»<sup>70</sup>:

Մինչ Հայ թատրոնի բեմ բարձրանալը, սակայն, Ավարայրի հերոսը՝ որպես նահատակի աճյուն-մասունքներ, սփռվել էր Հայոց աշխարհում՝ ոչ միայն սրբության մի նոր շունչ հաղորդելով անդնդախոր լեռներին ու ձորերին, այլև Հայոց գալիքի տեսիլքին միախառնելով Ավարայրի վերհուշը:

---

<sup>70</sup>Նույն տեղում, էջ 180:

**Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք  
Ե Ի  
Հ Ա Յ Ո Յ Ա Շ Խ Ա Ր Հ Ը**

*Ավարայրից հետո երիցս սրբագործվեց Արտազ գավառը:  
Այն նախ նվիրագործվեց Թադեոս առաքյալի և Սանդուխտ  
կույսի նահատակությամբ:*

*Արտազի՝ մինչ Ավարայրի դաշտը Ս. Սանդուխտի նահա-  
տակությամբ Շավարչանի դաշտով նվիրական դառնալը հայ  
միջնադարյան երգերի նորովի և զարմանահրաշ հետևողութ-  
յամբ այսպես է ներկայացնում Ղևոնդ Ալիշանը «Շուշանն  
Շաւարչանա» պոեմում.*

*Կուսանք Հայոց, նոր շուշան  
Տեսէք ի դաշտ Շաւարչան:  
Պայծառ պատկեր կուսանաց  
Հայոց պրսակ պարծանաց,  
Ճակատն ի քօղ խորոտիկ,  
Ի հով տըլած խոպոպիք,  
Տատրակ տոտամբ մանտրուքայլ  
Ման գայ ի դաշտ ցօղափայլ.  
Մեղըր կաթէ շրթներուն,  
Փայլկրտան աչքըն սիրուն:  
Կուսանք Հայոց, նոր շուշան  
Տեսէք ի դաշտ Շաւարչան<sup>71</sup>:*

*Արտազի առաքելաշուռնչ այս նվիրականությունն այնու-  
հետև Գրիգոր Լուսավորչին էր փոխանցվելու, երբ արքայա-*

---

<sup>71</sup> Հ. Ղ. Ալիշան, Նուագք, հտ. Գ, Հայրունի, Ս. Ղազար, 1867, էջ 299:

սպան Անակը, դավով ու նենգությամբ գալով Հայոց աշխարհ, անցնում է այս գավառով: Ինչպես գրում է Պատմահայրը, «Արդ, երբ Անակը մնում էր Արտագի դաշտում, նրա գիշերելու տեղը խորանի ներսի կողմը, պատահեց սուրբ առաքյալի գերեզմանի մոտ անկողինը, և ասում են, այստեղ է հղությունն առել մեր սուրբ և մեծ Լուսավորիչը: Ուստի և նույն առաքյալի շնորհը ստացավ նա, որ նրա հանգստարանի մոտ գոյությունն գտավ և նրա հոգևոր մշակության պահասը լրացրեց»<sup>72</sup>:

Արտագը երրորդ անգամ սրբագործվեց Ավարայրով, և այստեղից սկսած՝ ողջ Հայոց աշխարհով մեկ սկսեցին տարածվել Ավարայրի հիշատակները:

Հատկանշական է, որ Ավարայրը սրբագործել է նաև այս ճակատամարտի ոսկեղենիկ գրչի հիշատակը՝ հյուսելով մի շարք գեղեցիկ ավանդություններ: Եղիշեի վարք-կենսագրությունում ասվում է, որ նա «էր զինուորեալ Սրբոյն Վարդանայ և սպասաւորէր նմա»: Ավարայրի ճակատամարտից հետո նա առանձնացել է Մոկաց աշխարհի մի այրում, որը նրա անվամբ կոչվում է Սուրբ Եղիշեի այր: Մի օր նրան հովիվները տեսնում են աստվածային լույսի նշանը վրան իջած և պատմում այս մասին: Իմանալով այդ՝ Եղիշեն ծածուկ հեռանում է այդ այրից և գնում Ռշտունյաց գավառը՝ ծովեզերյա մի այր, որն այնուհետև անվանվում է Սուրբ Եղիշեի այր: Այստեղ էլ նա վախճանվում է, և հովիվները գտնում են նրա մարմինը և ստուգելով իմանում, որ ինքն է: Այդժամ Մոկաց իշխանը ցանկանալով, որ իր գավառը ևս ունենա Ավարայրի սոխակի մասունքներից, գալով Ռշտունիք՝ ծածուկ մի մասունք է վերցնում նրա նշխարներից և տանում իր հետ և նրա սկզբնական ճգնության այրում մի վկայարան կառուցում, ուր բազում ուխտավորներ են գալիս և սրբի բարեխոսությամբ բժշկվում են այսահարները<sup>73</sup>:

<sup>72</sup> Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, էջ 259:

<sup>73</sup> Տես Պատմութիւն Սրբոյն Եղիշեի վարդապետի, Սոփերք Հայկականք, հտ. ԺԱ, Վենետիկ, 1854, էջ 42:

Եղիշեի՝ որպես զորավոր սրբի մասին գրում է նաև Գարեգին Սրվանձտյանցը. «Կերխա եկեղեցին Ս. Եղիշեի անուկով շինված է, նսեմ և գծուծ շենք մը, դուռը միշտ բաց, ուր ուխտավորք և աղոթավորք կը հաճախեն հայ և քյուրդ: «Շատ զորավոր է մեր Ս. Եղիշեն,-կը պատմեր ծերունի մը,- որ օգնության կը հասնի ամեն վտանգելոց, և թե հերազի և թե բաց աչոք շատ անգամ կը տեսնամք զինքն. ինքն է կարմիր ձիավոր, զրահավոր, ճերմակ մորուք վարդապետ, ճգնավոր»<sup>74</sup>:

Հ. Խառատյանը նշում է, որ Եղիշեին նվիրված բազմաթիվ սրբավայրեր կան Աղվանքում և որ Ավարայրի սրբի հիշատակը միախառնվել է Եղիշե առաքյալի հիշատակին: Այս միախառնման ազգային-քաղաքական պատճառների մասին հետազոտողը գրում է. «Հայոց և Աղվանից հակազրադաշտական ապստամբական շարժումը գլխավորած Վարդան Մամիկոնյանի զինակից և բարեկամ, դարաշրջանի մեծագույն գրագետ Եղիշե վարդապետի՝ հոգևորականի, քրիստոնյայի և նահատակի՝ Աղվանից աշխարհում սիրված կերպարը ավելի ուշ դառնում է նախատիպը Աղվանքի կարևորագույն սրբի՝ Եղիշե առաքյալի, որին նվիրված հուշարձանները ցայսօր Աղվանքի տարածքում շարունակում են հանդիպել ամեն քայլափոխի»<sup>75</sup>:

Արտազի հիշատակներն առաջին հերթին կապվում են նահատակված Վարդանանց թափված արյան հիշատակների հետ: Արշակ Աթայանը գրում է. «Խոյից դեպի հարավ, Սպամաստի սահմանին մոտ, գտնվում են այն կարմիր բլուրներն, ուր, ըստ ավանդության, կանգնած է եղել Վարդան Մամիկոնյանը և հրամաններ է եղել տալիս Տղմուտի՝ այժմյան Ղութուր չայի ափին մարտնչող զորքերին: Այդ բլուրներից մեկի վրա ընկել է Վարդանն, ուր և կառուցված է մի մատուռ, որ նրա անուկով կոչվում է Ս. Վարդան: Այդ բլուր-

<sup>74</sup> Գարեգին եպս. Սրվանձտյանց, Համով հոտով, գիրք երկրորդ, Երկեր, գիրք Ա, Երևան, 1978, էջ 416:

<sup>75</sup> Հ. Խառատյան, Եղիշե առաքյալը և նրա առաքելությունը, «Հայոց սրբերը և սրբավայրերը» գրքում, Երևան, 2001, էջ 58:

ները կազմված են կարմիր ավազաքարից, ըստ ժողովրդական ավանդույթյան՝ Վարդանանք են կարմրացրել իրենց արյունով»<sup>76</sup>:

Կոտայքի Ալափարս գյուղի եկեղեցում պահվող մի քարի մասին ասվում է, որ այն ներկված է Ս. Վարդանի արյամբ: Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը գրում է, որ ի պատիվ այս քարի, ամեն տարի այստեղ ուխտավորներն այնպես են հավաքվում, «ինչպես Մեռոնի օրհնության և կաթողիկոսի օծման ժամանակ էջմիածնում է պատահում»:

Սմբատյանցը այս եկեղեցում եղել է Ս. Վարդանի տոնին և գրում է, որ այդ ժամանակ «եկեղեցվո սեղանո բեմի վրա կարգով բազմեցրած, դասավորած էին մի խաչ, մի Ավետարան և մի սևագույն, երեք ֆունտաչափ լեռ քար՝ շրջապատած արծաթյա խաչով, որ ըստ պատմության ծերունի Մանուել քահանային, ներկված է սրբույն Վարդանա արյամբն, և քարս բերված է Մակու քաղաքիցը 1830 թվին», երբ այս գյուղի բնակիչները գաղթում և այստեղ են գալիս Մակուից: Գյուղի քահանան այդ քարի մասին ասում է. «Մեր նախնյաց ավանդույթյան համաձայն՝ այն քարը և մյուս սուլյանման քարը, որ մնաց Մակուա եկեղեցվո մեջ, ներկված են սուրբ Վարդանա պատվական արյամբն և պահվում էին միշտ Մակվա Սուրբ Վարդանա անունով եկեղեցվո ավագ խորանի մեջ: Երբ ժողովուրդը գաղթեց այս երկիրը՝ այս մի քարն իբրև սուրբ ավանդ նախնյաց, բերեց Հետը, և այստեղ ևս պահվում է Սուրբ Վարդանա անունով եկեղեցվո մեջ՝ իբրև սուրբ և նվիրական ավանդ մնացած մեզ 1450 տարուց հետե»<sup>77</sup>:

Արտագին սահմանակից Նախիջևանը գույգ հիշատակներով է կապվում Վարդանանց մասունքների հետ՝ Աստապատով և Նախիջևանի Կարմիր վանքով: Համաձայն ավանդույթյան՝ Աստապատի Ս. Վարդան վանքը կառուցվել է ի հիշատակ Վարդանանց, և ասվում է, որ Ավարայրի հերոսների

<sup>76</sup> Ա. Աթայան, Սալմաստ, Նոր Ջուղա, 1906, էջ 220:

<sup>77</sup> Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1898, էջ 300:

նահատակությունից հետո Վարդանի և իր զինակիցների մարմինները պատանում են, որ ամփոփեն, սակայն Մակուլից տեղի մեծատոհմիկները գալիս և տանում են իրենց քաղաքը, և այստեղից էլ ծագում է «Աստապատ» անվանումը, այսինքն՝ այստեղ պատեցին, սակայն ամփոփեցին Մակուլում<sup>78</sup> :

Ս. Վարդանանց հետ կապվող երկրորդ հիշատակը Նախիջևանում գտնվում է Աստապատից ներքև՝ Արաքսի ափին գտնվող մի բերդի ավերակների մոտ: Ն. Տեր-Ավետիքյանը գրում է. «Բերդին կից արձանացած է ամայի Ս. Վարդան անունով վսեմ և հոյակապ վանքը, խաչը դեռ մնում է բարձր, սուր գմբեթի վրա: Եկեղեցին մեծ և ամուր շինություն է, գրեթե չվնասված դարերի ընթացքում: Կառուցված է կարմրակապ, չորս սյուներով, երեք խորանով: Ժողովրդի ավանդույթյունով այդտեղ են թաղված Վարդանանց պատերազմում նահատակված զինվորները: Եկեղեցու արևելյան պատի մեծ դուռը մտնում է մի այլ մեծ շինության մեջ՝ չորս սյունի վրա, կամարակապ, կոփածո քարից. ավանդույթյունով այդտեղ հասարակ ժողովրդի և զինվորների կանգնելու համար է»<sup>79</sup> :

Սուրբ Վարդան անունով մի սրբավայր կա և Սիսիանի Շոռոթ գյուղում: Այստեղի բնակիչները ժամանակին Պարսկաստանից գաղթելիս իրենց հետ հող են բերում և նոր բնակավայրի տեղում լցնում<sup>80</sup> :

Իջևանում է գտնվում մի կաղնի, որը անվանվում է Վարդան Զորավարի կաղնի<sup>81</sup> :

Վանի Ս. Վարդան եկեղեցու մասին Շերենցը գրում է. «Այստեղ է հայ մեծ նահատակի մասունքներից մի կտոր կամ ըստ ոմանց՝ ճկույթն, բերված Արտազու Ս. Թադեոս առաքելոց վանքից»<sup>82</sup> : Վարդանանց թափած արյան խորհրդով

<sup>78</sup> Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, 1842, հտ. Բ, էջ 302:

<sup>79</sup> Ն. Տեր-Ավետիքյան, Տեղագրական մամակներ, Տիֆլիս, 1888, էջ 13-14:

<sup>80</sup> Տէն Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 233:

<sup>81</sup> Տէն նույն տեղում, էջ 234:

<sup>82</sup> Շերենց, Սրբավայրեր, էջ 26:

Ս. Վարդան եկեղեցիները սովորաբար կարմիր քարից են լինում կամ էլ անվանվում են Կարմիր վանք: Կարմրաքար էր և Վանի Ս. Վարդան եկեղեցին. «Արդարև, տեսք ու տեսարանովն էլ կարմիր է Ս. Վարդան եկեղեցին: Տաճարն ավելի վայելուչ և գեղեցիկ, իսկ գավիթն նոր ի նորոյ նորոգված հարմար հատակագծով, որո հարավից բացված պատուհաններից ցույցած արևու ճառագայթները սփռվելով սեղանների վրա, անդրադառնալով գավթի տարածության մեջ, ամեն մի սուրբ առարկայքն երփներանգ գույների մի տեսակ երևույթ են ցույց տալիս մարդուս, աչքերն են խոխտացնում և միտք ու հոգին փոխարկելով երևակայության աշխարհ, և ուր նահատակների արյան շիթերն են ցողել...»

Ս. Վարդան եկեղեցին թեև չունի բազմաթիվ ծխականք, սակայն յուր խնկելի անունը հեռվից ու մոտից բերում է յուր դուռն ամեն ճշմարիտ հայ քրիստոնյան, մանուկն, տղան ու աղջիկ, ծերն ու երիտասարդ կարոտիվ հիշում են Կարմիր Վարդանին և հավաքվում են այնտեղ աղոթելու:»

Վարդան Մամիկոնյանի գլխի համար Վասպուրականի տեղային մի ավանդությամբ էլ ասվում է, որ այն Առեղ գյուղի մոտ գտնվող Ս. Վարդան վանքում է ամփոփված<sup>83</sup>:

Ղևոնդ Ալիշանը՝ նկատի ունենալով Ս. Վարդանի հետ կապված այս և մյուս սրբավայրերը, գեղեցիկ մի ընդհանրացվածությամբ գրում է. «Վարդանայ անգին մարմինը, անշուշտ հաւատարիմ Մամիկոնեանքն չթողուցին աւար Պարսից, այլ իբրև պանծալի նշան և դրօշ հայրենեաց՝ քաջաբար վերուցին: Նշխարքն զանագան տեղ ցրուեցան, և յետոյ մինչև ՚ի Համշէն, ուր կու յիշուին և ՚ի սկիզբն ԺԶ դարու: Բայց Ոգին հայրենեաց, հաւատարիմն Հայաստանի, որ իր քաջանշան որդւոց վարձու և անմահութեան մէկ մէկ անակնկալ և վսեմական բան կամ անուն կու հնարէր, յափշտակեց Վարդանայ նշխարաց մէջէն այն թանկ գլուխը՝ որ զինքը

---

<sup>83</sup> Ս. Միրանխորյան, Նկարագրական ուղևորություն, գիրք Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 160-161:

դնելով բոլոր Հայ աշխարհին և եկեղեցւոյ վրայ՝ աւելի բարձրացուց զանոնք, և այն ջաջուռ աջը՝ որ երեսուն տարի արևելից և արևմտից մէջ քաջագոյն և սրբագոյն վարիչ էր բանակաց, յաղթութեանց վճռահատ, և պսակաց հաւաքող. առաւ դրաւ՝ անոր մարմնով մայրենի նախահաւուն և հոգւով հօրն հանգստարանին մէջ, Ս. Լուսաւորչի նշխարաց քով: ...Սեպուհ լերան սրբազան սարերուն մէջ միաբանեցան երեք վեհագոյն նշխարք և մեծագոյն յիշատակք և աստուածափառ նահատակքն Հայոց. ԳՐԻԳՈՐ, ՏՐԴԱՏ, և ՎԱՐԴԱՆ»<sup>84</sup>:

---

<sup>84</sup> Հ. Գ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. Ա, Ս. Ղազար, 1869, էջ 267:



**Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք  
Ե Վ  
Հ Ա Յ Ո Ց Ե Ր Կ Ն Ա Կ Ա Մ Ա Ր Ի  
Լ ՈՒ Մ Ի Ն Ը**

*Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ,  
Համասփիւռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,  
Եւ ի նահապետս, որ մըտօք մոլար  
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր:*

**ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ**

*Ավարայրի ճակատամարտի նկարագրութիւնում Եղիշեն ասում է. «Եվ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարածամեց և երեկոյան դեմ դադարեց»: Քիչ անց այս մասին դարձյալ ասում է, որ «ճակատամարտը շարունակվեց մինչև արևի մայր մտնելը»:*

*Այսպիսով, գիշերը եկել և պատել էր Ավարայրի դաշտը, ուր ավարտվել էր ճակատամարտը և Տղմուտ գետի ափին հանգչում էին պատերազմում ընկածները, որոնց վերևից պետք է լուսինը դիտեր:*

*Նաև ինչպես ասացինք, Վարդանանց տոնը եկել և գումարվել է հանգուցյալների հիշատակի տոնման ժողովրդական արարողութիւնը՝ այն դարձնելով հերոսների հիշատակի ոգեկոչման տոն: Համաձայն ժողովուրդների հերոսական-էպիկական մտածողութիւնը՝ նախահայրերի հոգիներն իրենց շիրիմներից դուրս են գալիս, և այն ճակատամարտի դաշտում,*

ուր իրենք ընկել են, անցնում են գիշերով և հեռանում ծագող արեգակի առաջին ճառագայթների հետ: Ասվածը վերաբերվում է նաև տարբեր ոգիներին: Ինչպես Թուժանյանն է գրում.

**Բազմած լուսնի նուրբ շողերին,  
Հովի թևին թռուչելով՝  
Փերինները սարի գլխին  
Հավաքվեցին գիշերով:**

**...Կանչում էին հրաշալի  
Հընչյուններով դյուժական,  
Ու հենց շողաց ցուքն արևի՝  
Անտես, անհետ չքացան:**

**Խոր սուզվեցին ակն աղբյուրի,  
Մըտան կաղնին հաստաբուն,  
Ու լեռնային վըտակների  
Ալիքները պաղպաղուն:**

Լուսնի նուրբ շողերով են պատված և Ավարայրի հերոսներին նվիրված՝ Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» և Ռաֆայել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմները, ինչպես նաև լուսնի նուրբ շողերով էր ողողված հայ բեմը Վարդանանց նվիրված ներկայացումների ժամանակ:

Լուսնի այս պատկերը Ավարայրի վրա սկսեց տարածվել Ալիշանով: Հայոց Նահապետն իր բանաստեղծական տաղանդով լուսնի պատկերում միահյուսեց Բարեկենդանի հինգշաբթիի խորհուրդը ու արևմտակարգական ռոմանտիզմի և հատկապես օսեանական շարժման ըմբռնումները: Շոտլանդացի գրող Ջեյմս Մակֆերսոնն իր ստեղծագործությունները վերագրել է իբրև թե երրորդ դարում ապրած Օսեան անվամբ իր հայրենակցին: Այս վերագրումից մի պահ խաբված

ու հիացմունքից ցնցված Եվրոպան Օսեանին անվանեց Հյուսիսի Հոմերոս: Օսեանին վերագրվող պոեմներում մեծ տեղ է տրվում Հյուսիսային Շոտլանդիայի վայրի և ահեղ բնութայանը, ուր շարունակ մրրիկն է ոռնում, իսկ մշուշի միջից հայտնվում և ապա դարձյալ այդ մշուշում անհետանում են մեռած հերոսների հոգիները, և ողջ բնանկարը լուսավորվում է ամպերի միջից հայտնվող լուսնի գունատ շողերով<sup>85</sup>:

Շարունակ ներքին մի ընդհանրություն է ստեղծվում բնութայան նկարագրությունների և շոտլանդացի ծեր բարդի հոգեվիճակի միջև: Այս մասին Գյոթեն Վերթերի միջոցով ասում է. «Ի՞նչ հրաշալի աշխարհ է տանում ինձ այդ վսեմ քերթողը: Կարծես թափառում եմ դաշտերում, ուր փոթորիկն է մոլեգնում ու ծխացող մշուշի մեջ, լուսնի աղոտ լույսով նախահայրերի ոգիները հալածում»:

Օսեանի երգերում բնութայանը և ուրվականներին միահյուսված երրորդ պատկերը լուսինն է, որն էլ Ալիշանն ընտրում և դարձնում է գլխավոր գործող անձ, ներկայացնելով հայ միջնադարյան բանաստեղծությունը բնորոշ արտահայտչամիջոցներով, ինչպես օրինակ, «Իմ բարձրագնաց լուսին» սկավաճքով հայրենիների նման, Ալիշանը «Պլպուլն Ավարայրի» և «Լուսնկայն գերեզմանացն հայոց» գործերը համապատասխանաբար սկսում է հետևյալ տողերով.

**Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ (Պլպուլն)**

**Այ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու լապտեր  
(Լուսնկայն)**

«Պլպուլն Ավարայրի» պոեմը կառուցված է վարդի և բլբուլի սիրավեպի հետևողությունամբ, ուր բլբուլը Եղիշեի հոգին է, իսկ վարդը՝ Վարդան Մամիկոնյանը:

---

<sup>85</sup> Այս մասին տե՛ս Դ. Макферсон, Поэмы Оссиана, Ленинград, 1983, էջ 590, История всемирной литературы, М, 1988, էջ 80:

Օսեանի գործերում լուսնի շողերով հայտնվում էին ուր-վականները: Ալիշանը, գեղարվեստական մի զարմանալի հայտնագործամբ օգտագործելով վարդի և բլբուլի պատկե-րը, որն ունի նաև հոգու և մարմնի փոխհարաբերության այ-լաբանական խորհուրդը, լուսնի շողերի ներքո ուրվականի փոխարեն ներկայացնում է բլբուլին՝ Եղիշեի հոգուն:

**Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին,  
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Աւարայրին,  
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,  
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ՝<sup>86</sup>:**

Օսեանի ստեղծագործություններում լուսինը նաև երբեմ-նի փառքի հիշողության կրողն է, և նրա շողերը ծեր բարդի հոգում արթնացնում են անցյալի հուշերը: Նույն ձևով էլ Ալիշանը, լուսնին է դիմում և ինչպես հայրեններում քնա-րական հերոսն էր բողոքում իր սիրելիի համար, այնպես էլ ինքն է բողոքում հայրենիքի ճակատագրի համար, և լուսնի շողերն արթնացնում են անցած ժամանակների վերհուշը՝ ա-ռիթ դառնալով ևս մեկ ոգեկոչման:

Ամայի դաշտերում լուսնի շողերով լուսավորվող հերոս-ների շիրմի օսեանական տարածված պատկերով է ավարտ-վում նաև «Լուսնկայն գերեզմանաց հայոց»-ը: Նահապետը, դիմելով լուսնին, որպես վերջին խնդրանք՝ ասում է.

**Մեկ քար մ'այլ կայ յԱնծանոթ հովտին,  
Գընա հոն կաթէ գվերջին քո լոյս,  
Այն գերեզմանն է Նահապետին:**

Հատկանշական է, որ «Մահվան տեսիլ» պոեմում հայ գրականության մեծերին իրենց ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկություններով ներկայացնող Չարենցը

<sup>86</sup> Հ. Գ. Ալիշան, Նոսաք, հտ. Գ, էջ 310:

լուսին բառն առաջին անգամ օգտագործում է Ալիշանի կապակցութեամբ՝ գրելով.

**Լուսնի սառ լույսերով ողողված՝  
մոտենում է նա երբուն՝<sup>87</sup> :**

Այսպիսով, «Նահապետի երգերով» ստեղծագործական առումով արձագանքելով ժամանակի համակերպական գրական շարժմանը, Ալիշանը դրանք ծառայեցնում է ժամանակի հայ գրականութեան առաջադրած խնդիրներին՝ օսեանականութեանը բնորոշ գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները ներկայացնելով հայ միջնադարյան գրականութեան պատկերային համակարգի միջոցով՝ որպես գիտնական նրբորեն քննելով ու շարժմանը հայ բանաստեղծության լեզվական յուրահատկությունները և վերջինիս լեզվական շղարշով պատելով իր գործերը:

Ինչպես ասացինք, «Պլպուլն Ավարայրի» պոեմը գրված է վարդի և բլբուլի պատմության հետևողությամբ: Արևելյան սիրավեպերից եկող այս պատմությունը, միջնադարում ունեցած քրիստոնեական այլաբանություններից բացի, հայ բանաստեղծությունում աստիճանաբար ձևով է բերում շեշտված ազգային այլաբանության իմաստ: Գրիգորիս Աղթամարցու «Ծաղկունքն ասեն՝ հերիք արա» տաղի կապակցությամբ Մ. Ավդալբեկյանը գրում է. «Բլբուլն իբրև հեղինակ պիտի դիտել, իսկ վարդը՝ հայրենիք, ուր էլ ապաստանել է բլբուլը, կսկծացել է հոգին և տեղից տեղ թափառելով՝ հանգիստ չի գտել»<sup>88</sup>:

Համանման ձևով՝ իր պարունակած քրիստոնեական այլաբանություններից բացի, վարդը խորհրդանշում է նաև նահատակության գաղափարը:

Այս առումով ստեղծագործական իսկական մի գյուտ կա-

<sup>87</sup> Եղիշե Չարենց, Պոեմներ, Բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 486:

<sup>88</sup> Մ. Ավդալբեկյան, Գրիգորիս Աղթամարցի, Երևան, 1963, էջ 58:

րելի է համարել Ալիշանի մտահղացումը՝ Եղիշեի հոգին որպես բլբուլ և Վարդանին՝ «վարդն կարմրիկ» ներկայացնելը՝ այս ձևով անգամ կառուցվածքային առումով հավատարիմ մնալով ավանդական մոտիվին:

Վարդի և սոխակի սիրո ավանդական երգերում ասվում է, թե բլբուլը, մտնելով այգի, երգում էր վարդին, ապա այնտեղ չգտնելով նրան, շարունակ վարդ, վարդ կանչելով թափանում էր և ամեն տարի գարնան բացվելու հետ գալիս ու պարտեզում մյուս ծաղիկների մեջ իր վարդին որոնում և սկսում նույն երգը: Այն Ալիշանը մի քանի տողերի մեջ խտացրել է «Պլպուլն Ավարայրի»-ի թե՛ նախերգում և թե՛ վերջում: Պոեմի սկզբում ասվում է, որ բլբուլը

**Եղիշեայ հոգեակն է քաղցրաղբուցիկ  
Որ զՎարդանն ի վարդըն տեսնու կարմրիկ:**

Ամեն գարնան գալը և վարդին որոնելն էլ ակնարկված են հաջորդող տողերում.

**Ձրմեռն յանապատ կու գնայ, կայ ի լաց,  
ՅԱրտազ գայ զգարունն ի թուփ վարդենեաց,  
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն,  
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան:**

Պոեմի սկզբում այս տողերով ակնարկվում է նաև առաջիկա նահատակութունը, իսկ վերջում այն լիովին միահյուսված է սյուլթեի ընդհանուր զարգացմանը, երբ Ավարայրի ճակատամարտից հետո ռազմի դաշտ եկած Եղիշեն բլբուլի նման որոնում և չի գտնում վարդին, իսկ գտնելուց հետո էլ, որն ըստ էության հավասար էր կորցնելուն, քանի որ նա տեսնում է հերոսի մահով ընկած քաջին, շարունակում է իր անամոք ողբը: Եթե բլբուլի՝ շարունակ վարդին կանչելը վկայութունն էր սիրահարի նրա հավատարմության, ապա պոեմի վերջաբանում շարունակ Վարդանին հիշելն էլ վերած-

վում է հավատարմության ազգային ավանդներին և հայրենիքի ազատության համար ընկած նահատակների պատգամին.

**Կանչէ, պըլպուլիկ, կանչէ հոգեճայն,  
Որ յերկնուց ի վայր հայի և Վարդան,  
Յիշէ զՀայաստան տուն իւր սիրական,  
Հայաստան յիշէ զիւր Կարմիր Վարդան:**

Հուշիկների Կարմիրն Վարդան դրվագում էլ Ալիշանը լուսնին է իրեն ուղեկից ընտրում՝ գնալու Ավարայրի դաշտը. «Արդէն այս երեկոյիս նման՝ 14 դար առաջ այլ՝ այս անհատնում գիշերային լապտերս, այս բազմատես լուռ վկայս, այս խորհրդապահ լուսինս՝ սոյնպէս բոլորացեալ լուսալիր կու բարձրանար մեր եկած արեւտեան դարից ետեէն՝ Մասեաց-Ոտին կողերէն, Արարատայ դաշտին հորիզոնէն. և ահա հանդարտ համասփիւռ և իբրև իւղակաթ կակուղ ճառագայթներով կու լուսաւորէ մեր փնտռածը՝ Շաւարշական Աւարայրի ընդարձակ դաշտը»<sup>89</sup>:

«Պլպուլն Ավարայրի» պոեմի հետևողությամբ է Ռաֆայել Պատկանյանը գրել է «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, ուր գործող գլխավոր երկու անձերն են բանաստեղծը և լուսինը: Բանաստեղծը, դիմառնական եղնակով դիմելով լուսնին, ասում է.

**Ո՛վ լուսին, լուսի՛ն, էլ քանի՞ էդպես  
Դալկացած, տըժգույն, տըխուր երևես.  
Այդ թխպոտ ամպե՞րն քեզ զարհուրեցին,  
Բոցոտ կայծակնե՞րն քեզ այլայլեցին:  
Երկնից կամարի գեղը դու ես լոկ,  
Աստեղց մեջ չկա քեզ նըման ոք:**

<sup>89</sup> Հ. Գ. Ալիշան, Յուշիկք..., հուն. Ա, էջ 243:

Ուստի բանաստեղծը հարց է տալիս, թե ո՞րն է լուսնի այլայլման պատճառը: Լուսինը, «դող-դող ամպերը ճեղքելով», ասում է, որ իր տիրության պատճառը Ավարայրում ընկած հերոսներն են և հաջորդող դարերում Հայաստանի ավերումը:

Այս պոեմի մեջ է գտնվում և նշանավոր «Վարդանի երգը»: Այն արտասանվել և երգվել է նաև որպես առանձին բանաստեղծություն: Ազգային հանդիսությունները թնդացրել է Վարդանի հարցումը.

### **Հիմի է՞լ լըռենք, եղբարք, հիմի է՞լ...**

Այն կրկնվելով յուրաքանչյուր տան սկզբում՝ մատնանշում է հայ կյանքի որևէ ցավն ու խոցելի երևույթը:

Լուսինն իր և արեգակի ընթացքով ներկայացնում է Ավարայրի ճակատամարտը, որը իրենք ողջ օրվա ընթացքում դիտել են երկնքից:

Վարդանի զոհվելու մասին բանաստեղծը լուսնի միջոցով ասում է.

**Կորավ դյուցազնը, կորավ Հայաստան,  
Զի հայոց միակ հույսն էր քաջ Վարդան.  
Թշվառ հայ ազգին նորա վեհ սիրով  
էլ այնուհետև չսիրեց ոչով:**

Այս պոեմը ևս սկսվում և ավարտվում է Լուսնի պատկերով.

**Ա՛խ, ցուլ՝, փայլե՛, տըխրադեմ լուսին,  
Գուցե քո փայլից փայլ տաս և հային.  
Պատմե շատերուն Վարդանի մահը,  
Կամ ինչպես կորավ հայ ազգի գահը,  
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը՝ աշխարհ Հայաստան:**

Այս երկու անմահ գործերն էին, որ կանխորոշելու էին



Վարդանանց նվիրված հետագա ստեղծագործությունները: Ինչպես գրում է Ազատ Եղիազարյանը. «19-րդ դարը նշանավորվեց Վարդանանց և նրանց ապստամբությունների և հատկապես հետաքրքրության ուժեղացումով: Դա միանգամայն հասկանալի էր: Այդ հարյուրամյակը ազգային զարթոնքի և ինքնագիտակցության, ազգային ազատագրական հույսերի և բուն ազատագրական շարժման սկզբնավորման շրջան էր: Եվ բնական է, որ անցյալի հերոսական օրինակները պետք է գրավեն հայ մտավորականության, ազգային պայքարի ոգեշնչողների ուշադրությունը: Կլասիցիստական դրամաների կողքին ստեղծվում են բանաստեղծական գործեր, որոնցից շատերը դարձան ուսմանտիպական պոեզիայի բարձր նվաճումներ: Հիշենք քրեստոմատիական օրինակները՝ հայր Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» և Ռափայել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմները, որոնք ժամանակին այնքան սրտեր հուզեցին և այնքան մեծ ազդեցություն ունեցան հայ երիտասարդության մտքի և հոգու վրա»<sup>90</sup>:

Այս երկու ստեղծագործությունները և ընդհանրապես Վարդանանց նվիրված գործերի մասին Սամվել Մուրադյանը գրում է. «Հայ նոր ու նորագույն գրականությունն էլ իրենց տեսադաշտում միշտ ունեցել են Ավարայրն ու Վարդանանց: Ե՛վ կլասիցիստ հեղինակները, և՛ իՄ. Աբովյանն ու նրան հաջորդած բանաստեղծները (Ղ. Ալիշան, Ռ. Պատկանյան, Մ. Նալբանդյան, Ս. Շահազիզ, Պ. Դուրյան, Զիվանի, Գ. Սրվանձտյան և ուրիշներ), 19-րդ դարի երկրորդ կեսի պատմահայրենասիրական ողբերգությունների հեղինակ թատերագիրները, հայտնի և անանուն երգահանները, նկարիչներն ու քանդակագործները ոգեշնչվել են Ավարայրով ու Վարդանանց սխրանքով: Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպին նախորդած գեղարվեստական գրականության

---

<sup>90</sup> Ա. Եղիազարյան, Վարդանանց պատերազմը հայ գրականության մեջ, «Ավարայրի խորհուրդը» գրքում, էջ 104:

*մեջ, սակայն, ամենանշանակալից երկերը Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» և Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմներն են, որոնք, մյուսների հետ միասին, հոգեբանորեն և գաղափարապես նախապատրաստեցին 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի հայ ազատամարտիկների նոր սերունդներին»<sup>91</sup>:*

---

<sup>91</sup> Ս. Մուրադյան, Եղիշեի մատյանը որպես պատմագրություն և պատմավեպ, «Ավարայրի խորհուրդը» գրքում, էջ 120:

**Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն Ի Փ Ո Խ Ա Ր Ե Ն**

**Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք**

*Լուսապսակե փրկողակ որպես,  
Նա՝ մեղքի ծովը նետված մարտակառք,  
Նա՝ խոյահարում ինքնապատարագ  
Եվ հաղթանակի վեմ արյունարվեստ,*

*Նա՝ պատգամակիր քարեղեն տախտակ,  
Դեպի ստորոտ ծավալվող քարվեժ,  
Նա՝ լանջավտակ մեր արյունախեժ,  
Հրանյութ իջմամբ հոսող գումարտակ,*

*Նաև՝ խողխողում արժանահատույց,  
Երթ ծովապատառ, ճայն աստեղաճիգ,  
Լուսեղենների լուծ թաքնաթաքույց,*

*Մահ-թևընծայում դեռ կայանալիք,  
Որ բերելու է մեզ նոր Տոնացույց՝  
Իրար խառնելով դարեր ու տարիք:*

**ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՎ ՏՈՒՆՆ ՄԱՄԻԿՈՆԵԻՑ ..... 3**

**ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ..... 13**

**ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՒ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ..... 42**

**ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՎ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ..... 59**

**ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ..... 74**

**ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՎ ՀԱՅՈՑ ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻ  
    ՀՈՒՍԻՆԸ ..... 81**

**ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.  
    Ա. ԴԱՎԹՅԱՆ - ՎԱՐԴԱՆԱՆՔ ..... 90**

**ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳԻ**

**ՎԱՐԴԱՆԱՆՔ**

**ԵՎ**

**ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ**

**Խմբագիր՝ Վանուհի Եղիշյան**